

ղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում: Համայնքներում չգրանցված ծնունդների բացահայտման և գրանցման գործընթացը ապահովելու նպատակով խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության մեջ 2011թ.-ին կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որոնցով սահմանվել է, որ խնամակալության և հոգաբարձության մարմինները բացահայտում են համայնքում երեխայի ծննդյան փաստի՝ օրենքով սահմանված կարգով չգրանցման դեպքերը և դրա մասին իրազեկում մարզպետին, ինչպես նաև նախաձեռնում են գրանցման գործընթացը⁴⁵:

2012թ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված 2010թ.-ի Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության արդյունքների համաձայն՝ չգրանցված ծնունդների դեպքերը կրճատվել են 10 անգամ (2010թ.-ին՝ 0.4%, 2005թ.-ի 4%-ի համեմատությամբ): 2000թ.-ից ի վեր տնային ծնունդների ցուցանիշը զգալիորեն կրճատվել է (2000թ.-ին՝ 9%, 2005թ.-ին՝ 3%, 2010թ.-ին՝ 1%), մասնավորապես զգալի բարելավում է արձանագրվել մարզային մակարդակում (օրինակ՝ Գեղարքունիքի մարզում այն նվազել է 2005թ.-ի՝ 16 տոկոս ցուցանիշից մինչև 2 տոկոս՝ 2010թ.-ին)⁴⁶:

Քաղաքացիություն չունեցող երեխաներ

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն՝ երեխան ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք: Մասնակից պետություններն այդ իրավունքների իրականացումն ապահովում են իրենց ներպետական օրենսդրության և այս բնագավառում համապատասխան միջազգային փաստաթղթերով ստանձնած իրենց պարտավորությունների համաձայն, մասնավորապես՝ այն դեպքում, եթե այլ կերպ երեխան քաղաքացիություն չի ունենա: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ունի անվան և քաղաքացիության իրավունք:

Միավորված ազգերի կազմակերպության փախստականների գծով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի կողմից 2013թ.-ին կատարված հետազոտությամբ գնահատվել է քաղաքացիությանն առնչվող ՀՀ օրենսդրությունը՝ «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961թ.-ի կոնվենցիայով ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների և ապաքաղաքացիության վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային հիմնական փաստաթղթերով սահմանված նորմերի և չափանիշների տեսանկյունից:

Հետազոտությամբ բացահայտված հիմնական թերությունները ելնում են հետևյալից. ՀՀ օրենսդրությամբ տրված՝ քաղաքացիություն չունեցող անձի սահմանումը չի համապատասխա-

⁴⁵ ՀՀ տարածքային կառավարման նախարարի 03.03.2014թ.-ի թիվ 11-Ն հրամանով սահմանվել է տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը, որի մեջ ներառվել է նաև համայնքում երեխաների ծնունդների չգրանցման բացահայտման, հայտնաբերման դեպքում՝ գրանցման ուղղությամբ իրականացված աշխատանքների նկատմամբ հսկողության վերաբերյալ դրույթներ: Համանման բովանդակությամբ հարցաշար սահմանվել է նաև 29.01.2014թ.-ի ՀՀ արդարադատության նախարարի և ՀՀ տարածքային կառավարման նախարարի համատեղ հրամանով: ՀՀ կառավարության 11.08.2011թ.-ի թիվ 1156-Ն որոշմամբ սահմանվել է, որ ծննդկանի մահվան և նրա ամուսնացած չլինելու դեպքում համապատասխան բժշկական հաստատությունն ինքնուրույնաբար կազմակերպում է ծննդի պետական գրանցումը: Բժշկական հաստատությունից դուրս ծննդաբերության դեպքում ծննդյան բժշկական վկայականը տրվում է այն բժշկական հաստատության կողմից, որի բուժաշխատողը ցուցաբերել է բուժօգնություն ծննդաբերության ժամանակ, բժշկական հաստատությունից դուրս՝ առանց բուժօգնություն ցուցաբերելու ծննդի և ծննդից անմիջապես հետո հոսպիտալացվելու դեպքում ծննդի մասին բժշկական վկայականը տրվում է այն բժշկական հաստատության կողմից, որտեղ տեղի է ունեցել հոսպիտալացումը: Իսկ բժշկական հաստատությունից դուրս և առանց բժշկական օգնություն ցուցաբերելու ծննդի դեպքում, երբ ծննդից անմիջապես հետո հոսպիտալացում չի իրականացվել, երեխային սպասարկող առողջության առաջնային պահպանման հաստատության կողմից ծննդի մասին վկայականի փոխարեն տրվում է երեխայի առողջության մասին տեղեկանք:

⁴⁶ Հայաստանի դեմոգրաֆիական և առողջապահական հետազոտություն (2010) ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, տե՛ս <http://www.armstat.am/file/doc/99469868.pdf>

նում «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954թ.-ի կոնվենցիայով տրված սահմանմանը, առկա է ապաքաղաքացիության որոշման ազգային ընթացակարգ, քաղաքացիություն չունեցող անձանց որոշակի կատեգորիաներ դուրս են մնացել կացության և փաստաթղթերի տրամադրման գործող իրավական ռեժիմից: Նրանցից թվում են՝ ոչ օրինական կարգով Հայաստան մուտք գործած կամ Հայաստանում գտնվող անձինք, ինչպես նաև անձինք, ովքեր Հայաստան են ժամանել այլ պետության կողմից տրված՝ քաղաքացիություն չունեցող անձի ճամփորդական փաստաթղթով, ՀՀ օրենսդրությունում նախատեսված է դրույթ՝ ուղղված ՀՀ տարածքում գտնվող քաղաքացիություն չունեցող յուրաքանչյուր անձի ինքնության վկայական տրամադրելուն, Հայաստանում քաղաքացիություն չունեցող անձանց տրվող ճամփորդական փաստաթղթերը չեն համապատասխանում «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954թ.-ի կոնվենցիայի հավելվածով սահմանված պահանջներին: Արձանագրվել է, որ առկա են թերություններ ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դրա կորստի, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ դրույթներում⁴⁷:

Հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, որը հաստատվել է Կառավարության կողմից և ներկայացվել Ազգային ժողով: Օրենսդրական փոփոխություններով նախատեսվել է, մասնավորապես, անգործունակ անձանց՝ իրենց խնամակալների միջոցով քաղաքացիություն ստանալու համար դիմելու հնարավորություն, ծնողի համաձայնության բացակայության դեպքում երեխայի կողմից՝ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ ձեռք չբերելու նպատակով՝ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու կարգ (Օրենքի 16-րդ հոդված), կարգավորվել է երեխայի քաղաքացիության հարցը այն երեխայի պարագայում, որի նկատմամբ հաստատված է խնամակալություն կամ հոգաբարձություն, սակայն ծնողների դիմումի համաձայն ՀՀ քաղաքացիությունից երեխայի դուրս գալու համար սահմանված է պայման (երեխան պետք է ունենա այլ պետության քաղաքացիություն կամ այն ստանալու վերաբերյալ գրավոր հավաստում), նախատեսվել են մի շարք այլ կարգավորումներ: 19.05.2014թ.-ի նախագիծն ընդգրկվել է չորսօրյա նիստերի օրակարգ, սակայն առայսօր չի ընդունվել: Օրենսդրական բացերի կարգավորման խնդրից բացի իրավակիրառ պրակտիկայում առկա են նաև այնպիսի խնդիրներ, որոնք ևս խոչընդոտում են ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքի իրականացման հնարավորությունը⁴⁸:

ՀՀ 2011թ.-ի մարդահամարի տվյալների համաձայն՝ ՀՀ բնակչությունից 396 անձ իրենց համարել են քաղաքացիություն չունեցող, իսկ ծննդյան օրվանից մշտական բնակավայրում անընդհատ չբնակվող բնակչությունից՝ 363-ը⁴⁹:

Ինչ վերաբերում է Եվրոպայի խորհրդի շրջանակներում քաղաքացիության հետ կապված հարաբերությունները կարգավորող կոնվենցիաներին, ապա ՀՀ-ն չի միացել ԵԽ հիմնական կոնվենցիաներին այս բնագավառում: Այսպես, «Քաղաքացիության մասին» 1997թ.-ի Եվրոպական կոնվենցիային (ուժի մեջ է մտել 2000թ.-ին) և «Պետությունների իրավահաջորդության առնչությամբ ապաքաղաքացիության կանխարգելման մասին» կոնվենցիային (ուժի մեջ է մտել 2009թ.-ին) միանալու ուղղությամբ ՀՀ Կառավարության կողմից առայսօր որևէ գործողություն չի ձեռնարկվել:

Երեխայի անունը

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 45-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի ազգանունը որոշվում է ծնողների ազգանունով: Եթե ծնողները կրում են տարբեր ազգանուններ, ապա երեխային ծնողների համաձայնությամբ տրվում է հոր կամ մոր ազգանունը (տվյալ դրույթն ամրագրված է նաև «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով): Ծնողների միջև

⁴⁷ «Քաղաքացիության և ապաքաղաքացիության հարցերը Հայաստանում» ՄԱԿ ՓԳՀ Հայաստան, մարտ, 2013:

⁴⁸ «Քաղաքացիության և ապաքաղաքացիության հարցերը Հայաստանում» ՄԱԿ ՓԳՀ Հայաստան, մարտ, 2013:

⁴⁹ 2011 ՀՀ մարդահամարի արդյունքներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, տե՛ս <http://www.armstat.am/en/?nid=337>

երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունները լուծում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

ՀՀ արդարադատության նախարարի 2007թ.-ի մայիսի 14-ի «Քաղաքացիական կացության ակտերի գրառումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին» թիվ 97-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) 2-րդ հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ ծնողների համատեղ դիմումով հայրության որոշման գրանցման դեպքում երեխայի ազգանունը և անունը որոշվում է ծնողների համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի ցուցումով: Հոր դիմումով հայրության որոշման գրանցման դեպքում երեխայի ազգանունը որոշվում է հոր ցուցումով: Հրամանի 6-րդ կետով սահմանված է, որ հայրության որոշման կամ հայրության ճանաչման փաստի հաստատման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության դեպքում հայրության որոշման ակտային գրանցման մեջ երեխայի հոր մասին տեղեկությունները կամ տվյալները լրացվում են դատարանի վճռի հիման վրա: Երեխայի ազգանունը գրանցվում է դիմողի (ծնողի) ցուցումով: Նշված հարցով ծնողների միջև վեճի առկայության դեպքում ազգանունը գրանցվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի ցուցումով:

Հետևաբար, ծնողների միջև երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունների լուծումը դրված է խնամակալության և հոգաբարձության մարմնի վրա: Այս պարագայում խնդրահարույց է այն, որ

- չկան հստակ չափորոշիչներ՝ նման ցուցում տալու համար (ինչ չափորոշիչներով պետք է առաջնորդվի խնամակալության և հոգաբարձության մարմինը համապատասխան որոշում կայացնելու ընթացքում),
- օրենսդրորեն կարգավորված չէ խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից տրվող ցուցումի պատճառաբանված և հիմնավորված լինելու հանգամանքը, ավելին՝ սահմանված չէ նշված ցուցումի՝ գրավոր լինելու անհրաժեշտությունը,
- սահմանված չէ խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ցուցում տալու ընթացակարգը (արդյո՞ք անհրաժեշտ է լսել կողմերին, գնահատել նրանց փաստարկները և այլն), սահմանված չեն նաև ցուցում տալու համար հստակ ժամկետներ,
- նշված բացթողումների առկայության արդյունքում երեխայի անվան ընտրության հարցում ծնողների անհամաձայնության դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ցուցում տալու գործընթացը կարող է ձգձգվել: Հստակ կարգավորումների բացակայության պայմաններում առկա է նաև կոռուպցիոն ռիսկերի վտանգ:

3.1.3. Երեխայի մասնակցություն

Դպրոցականների մասնակցությունը կրթություն ստանալու իրավունքի բավարարմանը խոչընդոտվում է մի քանի հիմնական պատճառներով, ներառյալ՝ (ա) թույլ կամ ցածր ընդունակություններ ունենալը, (բ) ընտանիքում նյութական խնդիրների առկայությունը, (գ) արհեստագործական կրթությունը գերադասելը, (դ) ամուսնությունը: Կան երեխաներ, ովքեր ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակից դրված ստիպված են աշխատել՝ ընտանիքի նյութական խնդիրները հոգալու համար:

Դպրոցականները հիմնականում ավագ դպրոցն ընտրելու հարցում խորհրդակցում են ծնողների հետ՝ հաշվի առնելով դպրոցի հեղինակությունը և հոսքային ուղղվածությունները: Սա հատկապես տարածված է տեղացի երեխաների շրջանում: Ի տարբերություն դրան, Սիրիահայ երեխաները դպրոցի ընտրության հարցում կարևորում են երկու նախապայման՝ լեզուների թեքումը և հանդուրժողականության մթնոլորտի առկայությունը: Այս երեխաները հիմնականում դուրս են մնում դպրոցից կամ փոխում այն աշակերտների ու ուսուցիչների կողմից խտրական վերաբերմունքի դրսևորման պատճառով:

Սովորաբար ընտանիքում որոշումների կայացման գործում երեխայի մասնակցությունը սահմանափակվում է ժամանցի կազմակերպման, հագուստի ընտրության, մասնագիտության ընտրության և ուսումնական գործընթացի հետ կապված խնդիրներով: Ընտանեկան այլ խն-

դիրները չեն քննարկվում երեխաների հետ: Խնդրահարույց է այն, որ երեխաները ևս կարծում են, որ իրենք պետք է չխառնվեն «մեծերի գործերի մեջ»:

Երեխաների մասնակցությունը դպրոցի քաղաքականության մշակման գործընթացում սահմանափակվում է միայն աշակերտական խորհուրդների ձևավորմամբ, որն էլ հիմնականում չի գործում ըստ նշանակության, իսկ մանկավարժական խորհուրդն ընդհանրապես ոչ մի դեր չի ստանձնում՝ դպրոցի ինքնակառավարման գործընթացում երեխաների մասնակցությունն ապահովելու հարցում:

Միևնույն ժամանակ երեխաները հիմնականում տեղեկացված չեն միավորումներ, ասոցիացիաներ ստեղծելու, երեխաների իրավունքի, ինչպես նաև համայնքային որոշումների կայացման հարցում երեխաների մասնակցության հնարավորության մասին, ընդհակառակը նրանց առաջարկներին լուրջ չեն վերաբերվում կամ ստեղծում են արհեստական խոչընդոտներ դրանք չիրականացնելու համար:

Առաջարկություններ

- Ստորագրել և վավերացնել «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ Հաղորդումների ընթացակարգի վերաբերյալ կամընտիր արձանագրությունը:
- Վավերացնել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությունը, ՄԱԿ-ի «Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» միջազգային կոնվենցիան, «Երեխաների որդեգրման մասին» Եվրոպական կոնվենցիան (վերանայված):
- Քննարկել ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի վերաբերյալ կատարված վերապահումների վերանայման հարցը:
- Իրականացնել երեխայի իրավունքների բնագավառում ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների և դրանց գործնական կիրառման միջոցների խորքային ուսումնասիրություն՝ հիմնվելով համապատասխան պայմանագրային մարմինների ընդհանուր մեկնաբանությունների, անհատական հաղորդումներով կայացված որոշումների, զեկույցների, եզրափակիչ հետևությունների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային վճիռների հիման վրա:
- Իրականացնել երեխայի իրավունքների բնագավառում ՀՀ օրենսդրության համապարփակ ուսումնասիրություն՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջները, միջազգային կազմակերպությունների, միջազգային պայմանագրային մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կողմից արդեն իսկ իրականացված վերլուծությունները, զեկույցները և առաջարկները:
- Մշակել և ընդունել օրենսդրական փոփոխությունների և լրացումների փաթեթներ իրականացված ուսումնասիրության արդյունքների հիման վրա:
- «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանել իրավական ակտի կարգավորման ազդեցության գնահատման պահանջ՝ երեխայի իրավունքների բնագավառում:
- Սահմանել և կիրառել չգրանցված ծնունդների բացահայտման և հանրային իրազեկության բարձրացման գործունե մեխանիզմները:
- Ապահովել իրավասու պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համակարգված համագործակցություն և տեղեկատվության փոխանակում ծննդի չգրանցման դեպքերը բացահայտելու և կանխելու նպատակով:
- Հաստատել համակարգված համագործակցություն համայնքներում գործող հասարակական կազմակերպությունների (այդ թվում՝ երեխայի իրավունքների և ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովման բնագավառում գործող կազմակերպությունների) հետ ծննդի չգրանցման դեպքերը բացահայտելու և կանխելու նպատակով:

- Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության ոչ բավարար արդյունավետությունը հաշվի առնելով՝ լրացուցիչ մեխանիզմներ սահմանել (այդ թվում՝ ֆինանսական և մարդկային ռեսուրսների ներդրում) համայնքում երեխայի ծննդյան փաստի չգրանցման դեպքերը բացահայտելու և գրանցման գործընթացը նախաձեռնելու նպատակով:
- Միջոցներ ձեռնարկել ԱԺ օրակարգում ընդգրկված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի հրատապ ընդունման ուղղությամբ:
- Սահմանել քաղաքացիություն չունեցող անձանց հաշվառման մեխանիզմ:
- Իրականացնել հանրային իրազեկման բարձրացման միջոցառումներ՝ ապաքաղաքացիության կանխման և վերացման նպատակով:
- Իրականացնել մասնագիտական վերապատրաստման ծրագրեր տարածքային անձնագրային ծառայությունների աշխատակիցների համար քաղաքացիության ձեռք բերման ընթացակարգերի, ինչպես նաև համապատասխան աշխատակիցների կողմից անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու վերաբերյալ:
- Ստորագրել և վավերացնել «Քաղաքացիության մասին» 1997թ.-ի եվրոպական կոնվենցիան, «Պետությունների իրավահաջորդության առնչությամբ ապաքաղաքացիության կանխարգելման մասին» կոնվենցիան:
- Ներդնել երեխայի ծննդյան փաստը չգրանցելու վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման միասնական համակարգ:
- Օրենսդրությամբ սահմանել որոշակիացված չափորոշիչներ՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի համար համապատասխան ցուցումը տալու կարգի հստակեցման նպատակով:
- Սահմանել խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից տրվող ցուցումը պատճառաբանելու և հիմնավորելու պահանջ:
- Սահմանել խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ցուցում տալու ընթացակարգը և ժամկետները:

3.2 ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու ապահովումը մեր օրերում հանդիսանում են կարևորագույն խնդիր: Երեխաները բոլոր ժամանակաշրջաններում և հասարակարգերում մշտապես համարվել են հասարակության ամենաանպաշտպան և խոցելի խավերից մեկը: Այդ իսկ պատճառով ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ.-ի հուլիսի 5-ին և փոփոխվել՝ 2005թ.-ի նոյեմբերի 27-ին ժողովրդական հանրաքվեով) 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընտանիքը, մայրությունը և մանկությունը գտնվում են հասարակության և պետության պաշտպանության և հովանավորության ներքո: ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածում նշվում է, որ **ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են** հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: Բացի Սահմանադրությունից, կարևոր իրավական ակտ է ՀՀ ընտանեկան օրենսգիրքը (ընդունվել է 2004թ.-ի նոյեմբերի 9-ին և վերջին անգամ փոփոխվել՝ 2013թ.-ի ապրիլի 30-ին), որտեղ մանրակրկիտ լուսաբանվում է երեխայի ընտանեկան կարգավիճակին վերաբերող հարաբերությունները (մասնավորապես 9-րդ գլուխը):

Հատուկ կարևորվում է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 1996թ.-ի մայիսի 29-ին և վերջին անգամ փոփոխվել՝ 2011թ.-ի մայիսի 23-ին), որը հանդիսանում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի⁵⁰ կոնվենցիայի⁵¹ «ներպետական անալոգը», և այդ

⁵⁰ Այսուհետ՝ ՄԱԿ:

⁵¹ Հայաստանը միացել է 1993թ.-ի հունիսի 23-ին:



օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտեր:

ՀՀ-ում գործում է երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ, որի առաջին օղակը վարչական շրջաններին կից խնամակալության և հոգաբարձության մարմիններն են, երկրորդը՝ մարզպետարանների կանանց, երեխաների և ընտանիքի պաշտպանության բաժիններն ու Երևանի քաղաքապետարանի երեխաների պաշտպանության բաժինը, երրորդ՝ ամենավերին օղակը՝ Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովը: Ինչպես նշվեց հարցազրույցներից⁵² մեկի ժամանակ, համայնքային մակարդակում խնամակալության և հոգաբարձության մարմինների գործառույթները բավարար չափով չեն իրականացվում և երբեմն կրում են ձևական բնույթ, իսկ մարզային մակարդակում առկա է գործառույթների վերաբաշխման խնդիր, քանի որ այս մակարդակում պետք է իրականացվի ոլորտի համակարգում և վերահսկում: Հետևաբար պետք է հստակ տարանջատել համայնքային և մարզային մակարդակներում երեխաների պաշտպանության գործառույթները:

Հարկ է նշել, որ սույն ուսումնասիրությունն առաջինը չէ Հայաստանում, բայց քանի որ ուսումնասիրվող երևույթը դինամիկ է, ենթարկվում է մշտական փոփոխությունների, ունենում է զարգացման տարբեր միտումներ, մշտադիտարկման անհրաժեշտությունն ակնհայտ է:

Ստորև ներկայացված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված և երեխաների պաշտպանությանն առնչվող հոդվածների վերաբերյալ օրենսդրական կարգավորումը (de jure) և փաստացի իրավիճակը (de facto) Հայաստանում:

3.2.1. Երեխայի պաշտպանություն՝ ներառյալ ընտանեկան միջավայրը

Ծնողական խնամատարություն

ՀՀ ընտանեկան օրենսգրքի⁵³ 41-րդ հովածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին: Ծնողների բացակայության, նրանց ծնողական իրավունքներից զրկված լինելու և ծնողական հոգատարությունից զրկվելու այլ դեպքերում ընտանիքում դաստիարակվելու երեխայի իրավունքն ապահովում է խնամակալության և հոգաբարձության մարմինը: ՀՀ-ում ծնողների, ընտանիքի այլ անդամների և այլ անձանց պատասխանատվությունը՝ երեխաների դեմ ուղղված արարքների համար նախատեսված է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով⁵⁴ և ՀՀ քրեական օրենսգրքով⁵⁵:

Երեխայի զարգացող ունակություններին բացասական ուղղություն տվող ծնողների նկատմամբ վարչական պատասխանատվությունը սահմանվում է 177 և 178 հոդվածներով՝ 20000 կամ 30000 ՀՀ դրամ տուգանքով, իսկ երեխայի դեմ հանցագործությունների վիճակագրությունը հետևյալն է՝⁵⁶

⁵² Հարցազրույցներն անցկացվել են 2014 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ոլորտի մասնագետների հետ:

⁵³ Այսուհետ՝ ՀՀ ԸՕ, ընդունվել է 2004թ.-ի նոյեմբերի 9-ին և վերջին անգամ փոփոխվել է 2013թ.-ի ապրիլի 30-ին:

⁵⁴ Այսուհետ՝ ՀՀ ՎԻՎՕ, ընդունվել է 1985թ.-ի դեկտեմբերի 6-ին և վերջին անգամ փոփոխվել 2014թ.-ի նոյեմբերի 20-ին: ՀՀ ՎԻՎՕ-ում նախատեսված են հետևյալ 2 հոդվածները՝ **Անչափահասին հարբած վիճակի հասցնելը (177) և Ծնողների և նրանց փոխարինող անձանց կողմից երեխաների դաստիարակության և ուսուցման պարտականությունները չկատարելը (178):**

⁵⁵ Այսուհետ՝ ՀՀ քր. օր., ընդունվել է 2003թ.-ի ապրիլի 18-ին և վերջին անգամ փոփոխվել 2014թ.-ի հունիսի 21-ին: ՀՀ քր. օր.-ի 20-րդ գլուխը՝ «Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ», նախատեսում է 10 հանցակազմ:

⁵⁶ 2010թ.-ի ընթացքում ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններով հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության վիճակի, դատարաններում մեղադրանքի պաշտպանության պրակտիկայի մասին տեղեկատվական նամակ: Երևան, 2011, էջ 6:

Աղյուսակ 3: Երեխայի դեմ հանցագործությունների վիճակագրություն

ՀՀ քր. օր.	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Հոդված 165	35	32	26	25	20	16	11	21
Հոդված 166	2	3	1	1		2		1
Հոդված 167				1				1
Հոդված 168	1		2		6	9	6	1
Հոդված 169						3	2	10
Հոդված 173	3	2	6	3	6	2	1	3
Ընդամենը	41	37	35	30	32	32	20	37

ՀՀ քրեական օրենսգրքի 169, 170, 171, 172 և 174 հոդվածներով քրեական գործեր չեն հա-
րուցվել:

Ինչ վերաբերում է երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրականացմանը, ապա
պետք է փաստել, որ ՀՀ-ում դեռ առկա է առանց ծնողական խնամքի մնացած⁵⁷ երեխաների
խնամքի և դաստիարակության հիմնախնդիրը, ինչն ակնհայտ երևում է ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից
ներկայացվող տվյալներով: Այսպես, 2013թ.-ին ՀՀ-ում ընդհանուր առմամբ գրանցված է եղել
695068 երեխա, որոնցից 325235 աղջիկ և 369833 տղա⁵⁸: Այդ երեխաների մեծամասնությու-
նը՝ 99%-ից ավելին, գտնվել է ընտանիքներում, մի մասը (0.105%) գտնվել է մանկատներում,
մյուս մասը (0.108%) գիշերօթիկ դպրոցներում:

Ծնողներից բաժանում

Ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից ՀՀ ԸՕ-ի
59-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում: ՀՀ ԸՕ-ի 42-րդ հոդվածի
համաձայն՝ ծնողների առանձին (ընդ որում՝ տարբեր պետություններում) ապրելու դեպքում
երեխան նրանցից յուրաքանչյուրի հետ շփվելու իրավունք ունի: Արտակարգ իրադրության
մեջ գտնվող (ձերբակալված, կալանավորված, բժշկական հաստատությունում գտնվելու և
այլ դեպքերում) երեխան իր ծնողների և մերձավոր ազգականների, ինչպես նաև արտա-
կարգ իրադրության մեջ գտնվող ծնողն իր երեխայի հետ շփվելու իրավունք ունեն օրենքով
սահմանված կարգով: Մասնավորապես վերջին հարցերին անդրադառնում են ՀՀ քրեա-
կատարողական օրենսգիրքը⁵⁹ դատապարտված անձանց, և «Ձերբակալված և կալանա-
վորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը՝ ձերբակալված և կալանավորված անձանց
վերաբերյալ: Տեսակցությունները հստակեցված են ՀՀ արդարադատության նախարարու-
թյան քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ
հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 2006թ.-ի
օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ: Ինչ վերաբերում է կերակրողին կորցրած երեխա-
ների պաշտպանությանը, ապա «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդ-
վածի համաձայն՝ կերակրողին կորցրած երեխան ունի կենսաթոշակ ստանալու իրավունք,
որի նշանակման և վճարման կարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ, իսկ «Պետական
կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն ուղղակիորեն ամրագրում է, որպես կենսաթոշակի

⁵⁷ Այսուհետ՝ ԱԾԽՄ:

⁵⁸ www.armstat.am

⁵⁹ Այսուհետ՝ ՀՀ ՔԿՕ, ընդունվել է 2004թ.-ի դեկտեմբերի 24-ին և վերջին անգամ փոփոխվել է 2013 թ.-ի հու-
նիսի 19-ին:

տեսակ է կերակրողին կորցնելու դեպքում տրամադրվող թոշակը, որը և՛ աշխատանքային, և՛ զինվորական կենսաթոշակ է համարվում: Վերը նշված օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է մահացած կերակրողի 18 տարին չլրացած երեխային: Կերակրողին կորցնելու դեպքում նպաստի նշանակումը և վճարումը սահմանված է ՀՀ Կառավարության 2014թ.-ի հունիսի 26-ի N 635-Ն որոշմամբ:

Հարցվողների մեծամասնությունը նշեց, որ ծնողական իրավունքներից զրկելու կամ դրանք սահմանափակելու գործընթացը տևական է, կապված է բյուրոկրատական քաջքշուկների հետ, ինչից ելնելով նման պահանջներով հայցեր դատարաններ քիչ են ներկայացվում, մասնավորապես ՀՀ մարզերում: ՀՀ-ում ծնողական իրավունքից զրկելու վիճակագրությունը հետևյալն է. 2013թ.-ին ծնողական իրավունքից զրկելու վերաբերյալ ՀՀ դատարաններին ներկայացվել է 45 հայց, որից միայն 9-ն է բավարարվել, իսկ 2012թ.-ին ներկայացված 48 հայցից բավարարվել է 17-ը⁶⁰:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 2012թ.-ի մարտի 23-ին թիվ ԵԱԲԴ/0474/02/11 քաղաքացիական գործով կայացրել է նախադեպային որոշում⁶¹, որով ՀՀ վճռաբեկ դատարանը փաստացի տարբերակում է օրինականությունն ու երեխայի շահերի ապահովումը և հորդորում է ստորադաս դատարաններին իրականացնել երեխայի շահերի առավել արդյունավետ ապահովում: Ծնողական իրավունքների սահմանափակման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումները հայտնել է թիվ ԵԱԴԴ/1513/02/08 և ԵԱԲԴ/1095/02/08 քաղաքացիական գործերով:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ դատարան են դիմում նաև ծնողական իրավունքների վերականգնման հայցերով: Այսպես, 2013թ.-ին նման 3 հայց է ներկայացվել, որոնք մերժվել են, իսկ 2012թ.-ին ներկայացված 2 հայցից երկուսն էլ բավարարվել են⁶²:

Ինչ վերաբերում է կալանքի և ազատազրկման դեպքերին, ապա գործնականում ծնողի և երեխայի կապն ապահովելու առումով խնդիրներ գրեթե չեն առաջանում: Կալանքի և ազատազրկման դատապարտված անչափահասներին տրամադրվում են տեսակցություններ իրենց ծնողների կամ ծնողներին փոխարինող անձանց հետ: 2014թ.-ի դեկտեմբերի 20-ի դրությամբ՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում⁶³ պահվել են 2 դատապարտյալ անչափահաս, որոնց ծնողները պարբերաբար այցելել են հաստատություն իրենց երեխաներին տեսակցելու նպատակով: Եթե կալանքի կամ ազատազրկման ենթարկվածը ծնողն է, ապա տեսակցությունները տրամադրվում են, եթե դատապարտյալի երեխան որևէ չափահաս անձի ուղեկցությամբ այցելում է ՔԿՀ ծնողի հետ տեսակցություն ունենալու նպատակով: Բայց եթե երեխան նույնպես գտնվում է պետական հաստատությունում, ապա տեսակցությունների իրականացումը բարդանում է, քանի որ երեխային ՔԿՀ ուղեկցելու և ծնողի հետ տեսակցություն կազմակերպելու պարտականությունը պետական հաստատության աշխատակցի վրա դրված չէ: Օրենքը թույլ է տալիս, որ դատապարտյալն իր մինչև 3 տարեկան երեխայի հետ գտնվի ՔԿՀ-ում և հոգ տանի իր երեխայի համար, և գործնականում դա իրականացվում է, հատկապես, որ «Աբովյան» ՔԿՀ-ում կահավորված են մոր և մանկան սենյակներ, որտեղ

⁶⁰ Արդարադատական պրակտիկաներ (2015), տես http://court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=1

⁶¹ «Դատարանները երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է փան **երեխայի շահերի առավել ապահովմանը**: Դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):... Խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել թե՛ երեխայի և թե՛ այն անձի (անձանց) կյանքի հետազոտություն, ովքեր հավակնում են նրա դաստիարակությանը: Վերոնշյալից հետևում է, որ եթե երեխայի դաստիարակությանը հավակնում են մի քանի անձ, ապա խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել նշված բոլոր անձանց կյանքի հետազոտություն և դատարան ներկայացնել հետազոտության ակտը ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը:»

⁶² Արդարադատական պրակտիկաներ (2015), տես http://court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=1

⁶³ Այսուհետ՝ ՔԿՀ:

2014թ.-ի դեկտեմբերի 20-ի դրությամբ խնամվել են դատապարտյալ երեք կանանց 3 երեխաները: Դատապարտված կնոջ և նրա երեխայի համատեղ բնակվելու հարցի շուրջ չկա և չի կարող լինել մեկ միասնական կարծիք, քանի որ մոր և երեխայի համատեղ բնակության տևողությունը, ինչպես նաև երեխայի թույլատրելի տարիքը սահմանվում են՝ հիմնվելով կատարված գնահատականների, առկա փորձի և հիմնախնդրի շուրջ տեսակետների վրա⁶⁴:

Կերակրողին կորցնելու դեպքում պետությունը ստանձնում է երեխային կենսաթոշակով ապահովելու պարտականությունը, որը փաստացի իրականացվում է: Կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափը որոշվում է՝ հաշվի առնելով ՀՀ Կառավարության 2014թ.-ի հուլիսի 17-ի N815-Ն, 2014թ.-ի օգոստոսի 28-ի N895-Ն և այլ որոշումներում ամրագրված նորմերը: ՀՀ վիճակագրական վարչության տվյալներին համապատասխան ՀՀ-ում 2013թ.-ին կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացողների ընդհանուր թիվը կազմել է 2400 անձ, մինչդեռ 2012թ.-ին եղել է՝ 2800, իսկ 2011թ.-ին՝ 3300 անձ⁶⁵: Այս թվի նվազումը կարող է պայմանավորված լինել Ղարաբաղյան հակամարտության ընթացքում զոհված ծնողների երեխաների 18 տարեկանը լրանալու ու կենսաթոշակ ստացողների ցանկից հանվելու հանգամանքով:

Ընտանիքի վերամիավորում

ՀՀ ԸՕ-ի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողների ամուսնության դադարեցումը, այն անվավեր ճանաչվելը կամ նրանց առանձին ապրելը չեն ազդում երեխայի իրավունքների վրա: Ծնողների առանձին (ընդ որում՝ տարբեր պետություններում) ապրելու դեպքում երեխան նրանցից յուրաքանչյուրի հետ շփվելու իրավունք ունի: Քանի որ նման կարգավիճակում կարող է հայտնվել նաև երեխա փախստականը կամ փախստականի երեխան, այս հարցը պետք է քննարկվի Կոնվենցիայի հոդված 22-ի պահանջներին համապատասխան: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ մուտքի վիզայի տեսակներից է՝ այցելության մուտքի վիզան՝ ընտանիքի վերամիավորման նպատակով (սույն օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասի «գ» կամ «դ» կետերով նախատեսված դեպքերում)⁶⁶: Նույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օտարերկրացուն մուտքի վիզայի տրամադրումը (ժամկետի երկարաձգումը) կարող է մերժվել, տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած ճանաչվել կամ մուտքը ՀՀ արգելվել, եթե նա դատապարտվել է ՀՀ-ում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով չի հանվել կամ մարվել: Բայց այս դրույթը չի տարածվում ՀՀ-ում մերձավոր ազգականներ (ամուսին, երեխա, հայր, մայր, հարազատ քույր, եղբայր, տատ, պապ) ունեցող անձանց վրա:

Հաշվի առնելով ընտանիքի վերամիավորման ուղղված լայն քարոզարշավները, որոնք իրականացվում են միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի, Միգրացիայի միջազգային կազմակերպության և այլն) ու ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայության⁶⁷ կողմից՝ մասնագետների պնդմամբ այս ոլորտում խնդիրներ գործնականում չեն գրանցվում: ՀՀ ՄԴԾ-ն չի կայացրել մերժման որոշումներ ընտանիքի վերամիավորման նպատակով փախստականների կողմից ներկայացված դիմումների վերաբերյալ: ՀՀ ՄԴԾ-ից ստացված տեղեկությամբ պարզվել է, որ առանց ուղեկցության երեխայի

⁶⁴ Европейские пенитенциарные правила (рекомендация №R (87)3). Выпуск 2/ Ред. совет Ю. К. Александров и др. М. 1999, էջ 57:

⁶⁵ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի թվերով - 2014. Կենսամակարդակ և սոցիալական ոլորտ, էջ 33, տես http://armstat.am/file/article/armenia_14_5.pdf

⁶⁶ Այդ հանգամանքները հետևյալն են՝ ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելը, կամ ՀՀ քաղաքացու ՀՀ-ում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ):

⁶⁷ Այսուհետ՝ ՀՀ ՄԴԾ:

մեկ դեպք է եղել 2010թ.-ին, երբ 17 տարեկան մեկ երեխա մալիից հայտնվել է ՀՀ-ում:

Ինչ վերաբերում է երեխաների տեղափոխմանն այլ պետություններ, ապա այս հարցի կարգավորման գործնական աշխատանքներում փոփոխություններ են իրականացվել: Այսպես՝ ՀՀ անձնագրային համակարգի կանոնադրությունը և ՀՀ քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 1998թ.-ի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման մեջ 2011թ.-ի հունիսի 23-ին կատարված փոփոխությունների համաձայն՝ ՀՀ քաղաքացու անձնագիր պարտավոր են ունենալ 16 տարին լրացած ՀՀ բոլոր քաղաքացիները անկախ բնակության վայրից: 16 տարին չլրացած ՀՀ քաղաքացիներին ՀՀ քաղաքացու անձնագիր տրվում է ըստ ցանկության՝ մեկ ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Իսկ քանի որ ՀՀ քաղաքացու վավերական անձնագիրը հիմք է հանդիսանում ՀՀ սահմանն օրինական հատելու համար, երեխայի՝ ծնողներից որևէ մեկի ուղեկցությամբ սահմանը հատելու համար իրավական որևէ խոչընդոտ լինել չի կարող: Այսինքն մյուս ծնողը փաստացի կարող է իրագրել չլինել երեխայի տեղափոխման մասին: Հետևաբար, պետք է մշակել մեխանիզմներ՝ երեխայի վերադարձի և մյուս ծնողի իրավունքներն ապահովելու համար:

Երեխաների տեղափոխման իրավական կարգավորումը ներկայացվել է նախորդ հոդվածը մեկնաբանելիս: Հայաստանը վավերացրել է «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» 1993թ.-ի մայիսի 29-ի կոնվենցիան, որի 8-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, հաստատություն կամ այլ մարմին, որը բողոք է ներկայացրել այն մասին, որ երեխան տեղափոխվել կամ պահվել է՝ խնամակալության իրավունքների խախտմամբ, կարող է դիմել երեխայի մշտական բնակության կամ ցանկացած այլ պայմանավորվող պետության կենտրոնական մարմին⁶⁸ երեխայի վերադարձն ապահովելուն աջակցելու համար: Երեխային առևանգելու համար պատասխանատվությունը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով: Այն կիրառվում է անկախ այն հանգամանքից, թե առևանգումն իրականացվել է պետական սահմանը հատելով, թե ՀՀ-ի ներսում: Երեխայի տեղափոխման հետ կապված հանգամանքներ նախատեսված են նաև ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածներում⁶⁹:

ՀՀ-ում 2004-2014թթ.-ի ընթացքում գրանցվել է երեխայի առևանգման մոտ 40 դեպք: Ընդ որում, եթե առևանգումն իրականացվել է ծնողի կողմից, ապա կատարված արարքը հանցագործություն չի համարվում: Հայաստանը սկսած 2002թ.-ից ակտիվորեն ներգրավվել է ռեադմիսիոն (հետընդունման)՝ վերադարձի համաձայնագրերի կնքման գործընթացում: Ներկայում Հայաստանը նմանատիպ 11 համաձայնագրեր է ստորագրել 13 պետությունների հետ, որոնցից 12-ը եվրոպական երկրներ են, իսկ մեկը՝ ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը: 2013թ.-ի ապրիլի 19-ին Հայաստանն առանց թուլտվության բնակվող անձանց մասին ռեադմիսիոն համաձայնագիր է ստորագրել ԵՄ հետ, որն ուժի մեջ է մտել 2014թ.-ի հունվարի 1-ից⁷⁰:

Գործնականում երեխաների ապօրինի տեղափոխումների և արտասահմանից չվերադառնալու խնդիրների հետ կարելի է առնչվել այն դեպքերում, երբ ծնողներից մեկն ունի ՀՀ քաղաքացիություն, իսկ մյուսը՝ այլ երկրի քաղաքացիություն, և երեխան ծնվել է ՀՀ-ից դուրս: Ծնողների ամուսնալուծության դեպքում, որպես կանոն, երեխան մնում է այլ պետությունում, և ՀՀ քաղաքացի ծնողը բարդություններ է ունենում իր երեխայի հետ հանդիպելու ու շփվելու համար: Հարցի կարգավորումը հնարավոր է միայն միջազգային մասնավոր իրավունքի նորմերի կիրառմամբ:

⁶⁸ ՀՀ-ում կենտրոնական մարմին է ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալությունը:

⁶⁹ Օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով նախատեսված է շահագործման նպատակով երեխային հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը, որը կատարվել է ՀՀ պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով, իսկ 329.1-րդ հոդվածով քրեականացված է անօրինական միգրացիայի կազմակերպումը:

⁷⁰ Ուսուցողական նյութեր հետընդունման գործընթացում ներառված մարմինների՝ ՀՀ ԱԱԾ սահմանապահ ծառայության, ՀՀ ոստիկանության, ՀՀ ԱԳՆ, ՀՀ ՍԿՆ ՄՊԾ աշխատակիցների՝ համար, ՄՄԿ Հայաստան, 2013, էջ 3:

Ծնողական պարտականություններ և պետական աջակցություն

Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին վերաբերող վերլուծությունն իրականացվել է 5-րդ և 9-րդ հոդվածները ներկայացնելիս: Ինչ վերաբերում է աշխատող ծնողների իրավունքին, ապա ՀՀ աշխատանքային օրենսգրքի մի շարք հոդվածներում նախատեսված են արտոնություններ մինչև մեկ կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատողների համար⁷¹: Բայց եթե ծնողներն աշխատում են, ապա պետության հաշվին պետք է կազմակերպվի նախադպրոցական կրթությունը:

Նախադպրոցական հաստատությունների քանակը և դրանք հաճախող երեխաների թիվը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակի տեսքով⁷²:

Աղյուսակ 4: Նախադպրոցական հաստատությունների քանակը և դրանք հաճախող երեխաների թիվը

	2011թ.	2012թ.	2013թ.
Նախադպրոցական հաստատությունների քանակը	660	683	697
Քաղաքներում	419	421	422
Գյուղերում	241	262	275
Նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թվաքանակը, 1 000 երեխա	63.5	69.5	68.9
Քաղաքներում	52.4	56.3	55.2
Գյուղերում	11.1	13.2	13.7

Պետական նախադպրոցական հաստատություններում գոյացած հերթագրումները հանգեցնում են նրան, որ որոշ ծնողներ հարկադրված են իրենց երեխաներին տանել մասնավոր հաստատություններ: Բացի այդ, պետության կողմից իրականացվող քաղաքականությունն այդքան էլ արդյունավետ չէ այս առումով, քանի որ ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող հաստատությունների գերծանրաբեռնվածությունը հանգեցնում է որոշ երեխաների՝ նախակրթական ծրագրերից դուրս մնալուն՝ հաշվի առնելով մասնավոր հաստատությունների վճարովի լինելը: Երեխաների դաստիարակության և այդ նպատակով կիրառվող մեթոդների վերաբերյալ հարցազրույցների ընթացքում ստացվել են իրարամերժ տեղեկություններ: Մասնավորապես՝ նշվել է այդ հաստատություններում երեխաների իրավունքների ոտնահարման դեպքերի մասին՝ ծեծը որպես դաստիարակման մեթոդ կիրառելը, տարբեր սոցիալական խմբերի երեխաների նկատմամբ խտրականության դրսևորումը, հատուկ կարիքավոր երեխաների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքը և այլն: Մինչդեռ որոշ կառույցների ներկայացուցիչներ պնդում էին, որ նման դեպքեր ՀՀ-ում համարյա բացակայում են:

⁷¹ Ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ սահմանվում է մինչև 1 տարեկան երեխա խնամող աշխատողի պահանջով (հոդված 141), մինչև 3 տարեկան երեխա խնամող աշխատողը կարող է գիշերային աշխատանքի ներգրավվել միայն իր համաձայնությամբ (հոդված 148), մինչև 1 տարեկան երեխա խնամող աշխատողները կարող են ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ (հոդված 156) և այլն:

⁷² ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանը թվերով - 2014. Կենսամակարդակ և սոցիալական ոլորտ, էջ 37, տես http://armstat.am/file/article/armenia_14_5.pdf

Պաշտպանություն բոլոր տեսակի բռնություններից

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակ (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք: Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի: Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավումից, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից և նրա իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից: Երեխաների առողջության դեմ ուղղված հանցագործություններն առանձնացված չեն ՀՀ քրեական օրենսգրքում և դիտարկվում են առողջության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր համատեքստում կամ առանձին ծանրացնող հանգամանքի տեսքով, իսկ սեռական բռնություններն ու երեխաների թրաֆիքինգը կամ շահագործումն առանձին հոդվածներով ամրագրված են: Երեխաների դեմ սեռական հանցագործությունների վերաբերյալ օրենսդրությունն էապես բարելավվել է 2013թ.-ի դեկտեմբերի 23-ին: Երեխաները պաշտպանված են նաև շահագործումից: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 132.2-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի թրաֆիքինգը կամ շահագործումը համարվում է ծանր հանցագործություն: Ի տարբերություն չափահասների թրաֆիքինգի, այստեղ նշված չեն հանցագործության կատարման եղանակները, հետևաբար երեխայի թրաֆիքինգը կամ շահագործումը համարվում է ավարտված՝ անկախ այն հանգամանքից երեխայի նկատմամբ կիրառվել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն, դրա սպառնալիքը, խաբեություն կամ այլ եղանակ:

Ինչ վերաբերում է երեխային վիրավորանքից, հոգատարության բացակայությունից, անուշադրությունից կամ կոպիտ վերաբերմունքից գերծ պահելուն, ապա այս ոլորտին վերաբերող օրենսդրությունը հստակ չէ: Մասնավորաբար՝ այս երևույթների նկարագրման ու դրանց դեմ պայքարի փորձ է իրականացվել «Ընտանեկան բռնության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի նախագծով, որը դեռ լրամշակման փուլում է գտնվում: Իսկ այլ՝ հատուկ ոլորտային իրավական ակտ ՀՀ-ում գոյություն չունի:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում բռնության ոչ բոլոր դրսևորումներն են քրեորեն պատժելի, հետևաբար ներկայացվող պաշտոնական վիճակագրությունն արտացոլում է միայն այն հատվածը, որը վերաբերում է բռնության հանցավոր դրսևորումներին, մինչդեռ՝ ՀՀ-ում առավել հաճախ հանդիպում են երեխաների նկատմամբ բռնության քրեորեն չպատժվող դրսևորումները (անտեսում, մեկ հարված, հոգեբանական բռնության դրսևորումներ և այլն): Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները պայմանավորված են ընտանիքի և հասարակության կողմից երեխային որպես անհատ չընկալելու կամ մասնակի ընկալելու հանգամանքով: Ավելին, եթե ծնողը փորձում է դաստիարակել երեխային իր չիրականացված երազանքներին հասցնելու նպատակով, ապա երեխայի անհատականությունն «անհետանում է» ընտանիքի և ընտանիքի անդամների պահանջների մեջ, ինչը կարող է հանգեցնել երեխայի դեֆորմացիայի կամ հետագայում ինքնուրույն որոշում կայացնելու անկարողության: Ցավոք, երեխայի նկատմամբ ծեծը, ֆիզիկական այլ բռնությունը, հոգեբանական բռնությունը որպես դաստիարակչական մեթոդներ դեռ կիրառվում են:

Ինչ վերաբերում է երեխաների նկատմամբ քրեորեն պատժելի բռնության դեպքերին, ըստ վիճակագրության՝ երեխաների նկատմամբ իրականացվում են ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններ (առողջությանը դիտավորյալմբ ծանր վնաս պատճառելը), 119-րդ հոդվածով (խոշտանգումը), 131-րդ հոդվածով (առևանգումը), սեռական հանցագործությունները (հանցագործություններից առավել տարածված խումբը) և այլն: Ընդհանուր առմամբ 2004-2014 թվականների ընթացքում երեխաների դեմ ուղղված սեռական հանցագործություններով հարուցվել է մոտ 140 քրեական գործ, որից 7 գործով

հանցագործը նույնպես անչափահաս է եղել: Տարեցտարի Հայաստանում ավելանում են նաև երեխաների պոռնկության և մուրացկանության շահագործման դեպքերը: 2011թ.-ից առ այսօր գրանցվել է երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման 11 դեպք⁷³: Մուրացկանության շահագործման բոլոր դեպքերն իրականացվել են տղա երեխաների նկատմամբ, միայն մեկ քրեական գործով⁷⁴ տուժողն անչափահաս աղջիկ էր, ով շահագործվել է մոր փաստական ամուսնու կողմից: Սեռական շահագործման բոլոր դեպքերով զոհերն աղջիկներ էին⁷⁵: Չնայած երեխայի նկատմամբ բռնության քրեորեն պատժելի դրսևորումների նկատմամբ պետությունն իրականացնում է պայքարի հստակ մեթոդներ, բայց միևնույն է դրանք բավարար չեն երեխային բռնությունից պաշտպանելու համար, քանի որ քրեորեն անպատժելի դեպքերը, իսկ երբեմն նաև մասնավոր մեղադրանքի դեպքերը (ծեծ, դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը և այլն) մնում են առանց պատշաճ քննության:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին 2014թ.-ի փետրվարի 27-ի N303-Ն ՀՀ Կառավարության որոշման 53-րդ կետի համաձայն՝ պետք է մշակել երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգ և միջոցառումների ծրագիր: Այդ գործողությունը նախատեսված է կատարել ՀՀ ԱՍՀՆ-ի և ՀՀ ոստիկանության կողմից՝ միասնական համապարփակ փաստաթուղթ ներկայացնելով:

Երեխայի խնամք իրականացնող հաստատություններում չկան անձնակազմի համար մշակված հատուկ կանոնակարգեր, որոնք կկարգավորեն երեխաների հետ հարաբերությունները երեխաների պաշտպանության նպատակով: Բռնություններից պաշտպանված լինելու համապատասխան ազգային ուղղորդման ընթացակարգի բացակայությունը նույնպես «նպաստում է» ստեղծված անցանկալի իրավիճակին: Գործնականում մասնագետները հիմնականում դիմում են սաստելու, ենթարկելու, ավտորիտար կառավարման այլ միջոցների: Արտահայտությունները և ձևակերպումները, որոնք անձնակազմի մի մասը գործածում է երեխաներին և նրանց ծնողներին որակելիս, ուղղակի խախտում է նշանակում էթիկական և մասնագիտական տեսանկյուններից: Բոլոր հաստատություններում բավականին բազմազան է պատժաձևերի «զամբյուղը»։ Ի լրումն լայնորեն տարածված «անկյուն կանգնեցնել», «բղավել», «ականջ քաշել», «ծեծել» ձևերին՝ կարելի է հանդիպել նաև «հայիոյանք», «մութ տեղում պահել», «դպրոցից հեռացնել» (վերջինս շատ փոքր թվով է) ձևերին, ինչպես նաև այլ ոչ ստանդարտ ձևեր՝ երեխաներին դասարանում անտեսելը, հոգեբանի մոտ գնալուց զրկելը, բարևին չպատասխանելը, ցածր գնահատական դնելը, ավելի շատ տնային աշխատանք հանձնարարելը, ճաշից զրկելը: Հատկանշական է, որ երեխաների մեծ մասը հակված է վերը թվարկված պատժաձևերը համարելու արդարացված⁷⁶:

Ընտանեկան միջավայրից զրկված երեխաներ

ՀՀ ԸՕ-ի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողներին անգործունակ ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից իրենց երեխաներին վերցնելուց ծնողների հրաժարվելու դեպքերում), ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում, երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը դրվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների վրա: Խնամակալության և հոգաբարձության մարմինները բացահայտում են ԱԾԽՄ երեխաներին, վարում են նման երեխաների հաշվառումը և, ելնելով ծնողական

⁷³ ԵԶԴ/0054/01/09 քրեական գործ, ԵԷԴ/0079/01/09 քրեական գործ և այլն:

⁷⁴ ԵՇԴ/0026/01/12 քրեական գործ:

⁷⁵ Օրինակ՝ քրեական գործեր՝ ԵԿԴ/0164/01/13, ԵՇԴ/0052/01/12, ԿԴԴ/0082/01/13, ԵՄԴ/0129/01/11, ԼԴ/0050/01/13 և այլն:

⁷⁶ Հատուկ կրթական հաստատությունների մոնիթորինգի հաշվետվություն, 2013, էջ 10:



խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներից, ընտրում են այդ երեխաներին տեղավորելու ձևերը: 2011թ.-ի փետրվարի 24-ի N164-Ն որոշմամբ ՀՀ Կառավարությունը հաստատել է խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը, որտեղ մանրամասնված են ոչ միայն այդ մարմինների գործառույթները, խնդիրները, համագործակցությունն այլ մարմինների հետ, այլ նաև այդ մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Այդ որոշման 14-րդ կետով սահմանված են խնամակալության և հոգաբարձության մարմինների իրավունքներն ու պարտականությունները: ԱԾԽՄ երեխաների խնամքը ստանձնում է պետությունը՝ կազմակերպելով կամ խնամակալության ձևակերպումը, կամ որդեգրումը, կամ պետական հաստատությունում տեղավորելը, կամ խնամատար ընտանիքին հանձնելը:

ՀՀ ԱՍՀՆ համակարգում գործում է երեխաների շուրջօրյա խնամքի թվով 6 հաստատություն (մանկատուն)՝ 3 ընդհանուր տիպի մանկատուն և 3 մասնագիտացված մանկատուն: Ներկայում մանկատներում խնամվում է շուրջ 731 երեխա, այդ թվում 506-ը՝ մասնագիտացված մանկատներում: ՀՀ ԱՍՀՆ համակարգում գործում է 7 երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն, որոնք իրականացնում են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով ընտանիքների 6-18 տարեկան երեխաների խնամքը և դաստիարակությունը: Ներկայում երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում խնամվում են սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 750 երեխա: ՀՀ ԱՍՀՆ համակարգում գործում է սոցիալական հոգաձության երկու կենտրոն, որտեղ իրականացվում են դիսկի ենթակա երեխաների խնամքն ու սոցիալական հոգաձությունը, կրթադաստիարակչական, առողջապահական,

սոցիալ-հոգեբանական ծառայությունների և խորհրդատվությունների տրամադրման միջոցով կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների հիմնախնդիրների լուծմանն ուղղված աշխատանքները: Յուրաքանչյուր կենտրոնում իրականացվում է 100 երեխայի ցերեկային խնամքն ու դաստիարակությունը⁷⁷: ՀՀ-ում գտնվող հատուկ հաստատություններում խնամվում կամ կրթվում է 2106 երեխա, որոնցից՝ 1081 տղա⁷⁸:

Հատուկ կրթական հաստատությունների մշտադիտարկման հաշվետվության համաձայն, հատուկ հաստատություններում խնամվող երեխաների պարագայում այդ երեխայի «ես»-ի ձևավորումն առավել բարդ է, մասնավորապես՝ հաշվի առնելով անհատականությունը ճնշելու դեպքերը: Օրինակ՝ հաստատությունն իր խնդիրը համարում է միայն երեխայի կրթության իրավունքի իրացումը, ինչը տրամաբանության տեսակետից խառնաշփոթ է առաջացնում. կրթության իրավունքն առանձին, մնացած իրավունքներից անջատ, անհնար է իրականացնել: Ատահոգիչ է հաստատության պրակտիկայում երեխայի հանդեպ նման ոչ ամբողջական մոտեցմամբ աշխատանքը. այն խիստ դժվարացած է բավարար մարդկային և այլ ռեսուրսներ չունենալու, ինչպես նաև հարակից սոցիալական կառույցների հետ համագործակցության պակասի պատճառով⁷⁹:

Հատուկ հաստատություններում գտնվող երեխաների համար կենսապահովման պայմանները բավարար չեն՝ սկսած այդ շինությունների արտաքին տեսքից և վերջացրած անձնակազմի կողմից ցուցաբերվող միտցումներով: Իր ընտանեկան միջավայրից զրկված կամ իր լավագույն շահերի տեսակետից այդպիսի միջավայրում մնալ չկարողացող երեխան պետության կողմից պետք է ստանա ոչ միայն տարածք, որտեղ նա ժամանակավորապես կբնակվի, այլ նաև հատուկ աջակցություն ու օգնություն՝ ստեղծված իրավիճակը հաղթահարելու ու այդ իրավիճակից դուրս գալու համար: Հարցազրույցների ընթացքում կարծիք հնչեցվեց, որ «այդտեղ պայմանները պետք է լինեն այնպիսին, որ երեխան չցանկանա այնտեղից փախչել, այլ հակառակը՝ անգամ գույները լինեն գրավիչ ու հանգստացնող, իսկ մասնագետները անցնեն վերապատրաստում և թեստավորվեն՝ երեխային սիրելու ունակության տեսանկյունից»:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին 2014թ.-ի փետրվարի 27-ի N303-Ն ՀՀ Կառավարության որոշման 46-րդ կետի համաձայն՝ ՀՀ ԱՍՀՆ-ն ՀՀ Կառավարություն պետք է առաջարկություններ ներկայացնի շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների այլընտրանքային ծառայությունների վերակազմակերպման վերաբերյալ:

Հարցազրույցների ընթացքում նշվեց, որ խնամքի հաստատությունները երեխաների համար արդյունավետ չեն, քանի որ մեծ խմբում ապրելով՝ երեխան կորցնում է ինքնուրույնությունը՝ հետագայում բարդություններ ունենալով ընտանիք ստեղծելիս, դժվարությամբ է կարծիք ձևավորում, հատկապես, եթե այդ կարծիքը տարբերվում է ընդհանուր կարծիքից: Միայն այդ հաստատությունների տղաներն են շահում, քանի որ դա օգնում է արագ հարմարվել բանակի պայմաններին, այն էլ ընդամենը 2 տարում:

ՀՀ-ում պետք է տարբերել գրանցված խնամակալությունն ու չգրանցված խնամակալությունը: Վերջինիս դեպքում մերձավոր ազգականն ուղղակի դաստիարակում է երեխային՝ առանց օրինական գրանցում իրականացնելու, քանի որ խնամակալության գրանցումը կրում է «ձևական» բնույթ և անհրաժեշտ է միայն բացառիկ դեպքերում՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ առնչվելիս:

Որդեգրում

ՀՀ ԸՕ-ի 112-րդ հոդվածի համաձայն՝ որդեգրումը իրավաբանական այն ակտն է, որի համաձայն որդեգրողները և որդեգրվածները ծեռք են բերում ծնողների և զավակների հա-

⁷⁷ Ընտանիքի, կանանց, երեխաների հարցեր/վիճակագրություն Տեղեկատվությունը վերցված է http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=128&code_id=200 կայքից:

⁷⁸ Հատուկ կրթական հաստատությունների մոնիթորինգի հաշվետվություն, 2013, էջ 8:

⁷⁹ Նույն տեղը, էջեր 9-10:

մար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ: Որդեգրումը համարվում է ԱԾԽՄ երեխաների տեղավորման նախապատվելի ձևը: Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից ՀՀ քաղաքացի երեխաների որդեգրումը թույլատրվում է միայն այն դեպքերում, երբ հնարավորություն չկա այդ երեխաներին ՀՀ տարածքում մշտապես ապրող ՀՀ քաղաքացիների ընտանիքում դաստիարակության հանձնելու կամ երեխաներին իրենց ազգականների կողմից որդեգրելու: ՀՀ ԸՕ-ի 113-րդ հոդվածի համաձայն՝ որդեգրումը կատարում է դատարանը՝ երեխային որդեգրել ցանկացող անձի (անձանց) դիմումով: Երեխայի որդեգրումը հաստատելու մասին գործի քննությունը դատարանը կատարում է հատուկ վարույթի՝ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով: Երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է ՀՀ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին՝ նշելով որդեգրվող երեխայի և որդեգրողի (որդեգրողների) անձնական շփումների փաստի վերաբերյալ տեղեկություններ: ՀՀ ԸՕ-ի 121-րդ հոդվածի համաձայն՝ 10 տարին լրացած երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է նրա համաձայնությունը:

Երեխաների պաշտպանության ոլորտում ամենաառանցքային խնդիրներից է որդեգրումը, որն իր մարդասիրական դրսևորմամբ հանդերձ՝ կարող է հանգեցնել ոչ մարդասիրական դրսևորումների, մասնավորապես երեխայի շահագործման, սեռական ոտնձգության, ծեծի կամ այլ բռնության: ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ գլխում հատուկ կարևորվում է ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածը, որը նախկինում պատասխանատվություն էր նախատեսում երեխայի առջ ու վաճառքի համար, իսկ 2011թ.-ից պատասխանատվություն է նախատեսում խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքի և ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքի համար: Պատասխանատվության ենթակա է և՛ երեխայի գնորդը, և՛ վաճառողը:

ՀՀ դատական դեպարտամենտի տվյալներով ՀՀ-ում 2012թ.-ին երեխայի որդեգրման վերաբերյալ ներկայացվել է 99 հայց, որից բավարարվել է 96-ը, իսկ 2013թ.-ին՝ 82 հայց, որից բավարարվել է 79-ը: Որդեգրումը ոչ միշտ է դրական անդրադառնում որդեգրվող երեխայի վրա, ինչի մասին վկայում են որդեգրումը վերացնելու դեպքերը: Երեխայի որդեգրումը վերացնելու վերաբերյալ 2012թ.-ին ներկայացվել է 16 հայց, որից 8-ը բավարարվել է, իսկ 2013թ.-ին՝ 21 հայց, որից 13-ը բավարարվել է⁸⁰:

ՀՀ ԱՍՀՆ տվյալների համաձայն՝ 2013թ.-ին որդեգրման վերաբերյալ վիճակագրությունը հետևյալն է. որդեգրել ցանկացող անձանց թիվը 245-ն է, ՀՀ քաղաքացի որդեգրել ցանկացող անձանց թիվը 101-ն է, օտարերկրյա քաղաքացի որդեգրել ցանկացող անձանց թիվը 144-ն է, որդեգրման ենթակա երեխաների թիվը 109-ն է, որդեգրված երեխաների թիվը 47-ն է (ՀՀ քաղաքացիների կողմից՝ 20, իսկ օտարերկրյա քաղաքացիների կողմից՝ 27)⁸¹: ՀՀ-ում որդեգրումը հանդիսանում է խնամակալության հիմնական ձևը, բայց 2 տարվա ընթացքում վերացված 21 որդեգրումներն առնվազն վկայում են, որ որդեգրողները իրականացրել են ՀՀ ԸՕ-ի 130-րդ հոդվածում թվարկված գործողություններից որևէ մեկը: Ելնելով վերոգրյալից և երեխայի շահերից, հարկ է նշել, որ որդեգրումը՝ որպես խնամակալության հիմնական ձև վերանայման կարիք ունի:

Բուժման վերահսկումը խնամքի հաստատություններում

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի առողջության պահպանման և ամրապնդման իրավունք: Պետական համապատասխան մարմիններն ապահովում են առողջապահական ծառայություններից երեխայի ան-

⁸⁰ Հայաստանի դատական համակարգի պաշտոնական կայքէջ, 2014թ. http://court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=1

⁸¹ Տե՛ս http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=128&code_id=200



վճար կամ արտոնյալ պայմաններով օգտվելու հնարավորությունը՝ ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում: Եթե նման հաստատություն տեղավորված երեխայի ծնողներն անհայտ են, ապա նշված մարմինները դիմում են ՀՀ ոստիկանություն, որն առաջնորդվելով «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով պարտավոր է հայտնաբերել անհայտ կորած անձանց, իսկ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ ի լրումն այլ միջոցների ոստիկանությունն իրավունք ունի անհատույց օգտագործել պետությանը պատկանող զանգվածային լրատվության միջոցները՝ անհայտ կորած անձանց հայտնաբերելու նպատակով: Մինչև ծնողների հայտնաբերումը երեխան չի համարվում ծնողազուրկ, բացառությամբ, եթե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն մեկ տարվա ընթացքում անձի բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին⁸², ինչը հիմք է, որ շահագրգիռ անձանց դիմումով դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել: Միայն դրանից հետո հնարավոր է երեխային որդեգրել կամ նրա մասնակցությամբ իրականացնել նրա խնամքը: Ընդ որում, եթե անհայտ բացակայողը հայտնվում է, ապա դա հանգեցնում է որդեգրման վերացմանը:

ՀՀ Կառավարության 2006թ.-ի նոյեմբերի 9-ի N1735-Ն որոշմամբ հաստատվել է երեխաների խնամքի և պաշտպանություն իրականացնող հաստատություններում (մանկատուն, գիշերօթիկ) երեխաների տեղավորման կարգը: Մանկատներում երեխաների տեղավորման կարգի 4-րդ կետի համաձայն՝ մանկատանը տեղավորվում են երեխաներ՝ բժշկական հաստատություններից, ՀՀ ոստիկանության մարմիններից, ընտանիքներից և երեխաների ժա-

⁸² Բացակայողի վերաբերյալ վերջին տեղեկությունների ստացման օրը որոշելու անհնարինության դեպքում անհայտ բացակայող ճանաչելու համար ժամկետի հաշվարկի սկիզբ է համարվում այն ամսին հաջորդող ամսվա մեկը, երբ ստացված են եղել բացակայողի վերաբերյալ վերջին տեղեկությունները, իսկ եթե հնարավոր չէ որոշել այդ ամիսը, ապա՝ հաջորդ տարվա հունվարի մեկը:

մանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատություններից: 3 ամսվա ընթացքում ՀՀ ոստիկանության տարածքային մարմնի ղեկավարը հայտնաբերված երեխայի ծնողներին (կամ ծնողին) հայտնաբերելու կամ չհայտնաբերելու մասին գրավոր տեղեկացնում է այն հաստատությանը, որտեղ գտնվում է երեխան: Նույն կարգի 23-րդ կետի համաձայն՝ մանկատանը տեղավորված երեխային ծնողներին են վերադարձնում նրանց դիմումի և ծնողների բնակության վայրի մարզպետարանի, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի եզրակացության հիման վրա: Երեխաների խնամքի և պաշտպանություն իրականացնող գիշերօթիկ հաստատություններում երեխաների տեղավորման կարգի 4-րդ կետի համաձայն՝ երեխային գիշերօթիկ հաստատությունում տեղավորելու համար երեխայի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը դիմում է երեխայի բնակության վայրի մարզպետարան, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարան: Դուրս գրման կարգը նույնն է, ինչ վերը նշվածը:

2004թ.-ի մարտի 4-ի N318-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատվել է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերը, որոնց մեջ ներառված են՝ մինչև 7 տարեկան երեխաները, մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխաները՝, մինչև 18 տարեկան ԱԾԽՄ երեխաները, և ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող 18-23 տարեկան անձինք, մինչև 8 տարեկան և 12 տարեկան երեխաները՝ մասնագիտացված ստոմատոլոգիական բժշկական օգնության մատուցման, մինչև 18 տարեկան՝ դիսպանսեր հսկողության տակ գտնվող երեխաները, մինչև 18 տարեկան միաձնող երեխաները, մանկատներում խնամվող անձինք:

Հատուկ հաստատություններում երեխաների տեղավորման գործընթացն ընդհանուր առմամբ ընթանում է առանց բարդությունների, բայց երեխաների դուրս բերումն այդ հաստատություններից բավական դժվար գործընթաց է: Եվ երբեմն ծնողը, ով իրավունք ունի իր երեխային վերցնել հաստատությունից դժվարությունների է հանդիպում: Եթե երեխան արդեն համարվել է առանց ծնողական խնամքի մնացած, ապա ծնողը նախևառաջ պետք է ապացուցի երեխայի հանդեպ իր իրավունքները, նոր միայն վերցնի: Իսկ եթե երեխան գտնվում է գիշերօթիկ դպրոցում, ապա ծնողներն առանց որևէ խոչընդոտի վերցնում են երեխաներին: Անգամ այն դեպքում, երբ հաստատության աշխատակիցը գիտակցում է, որ այդ ծնողի մոտ երեխային թողելը չի բխում երեխայի լավագույն շահերից, ինքն անմիջապես որևէ գործողություն կատարելու հնարավորություն չունի: Ինչպես նշվել է հարցազրույցի ժամանակ, դա պայմանավորված է այն հանգամանքով, որ «պետությունն իր վրա է վերցնում երեխային դաստիարակելու ու խնամելու պարտականությունը, բայց ծնողին թողնում է երեխայի նկատմամբ բոլոր իրավունքները»: Երբեմն ծնողն անգամ «շահարկում է» ծնող լինելու փաստը և խոչընդոտում է երեխային որդեգրելու կամ երեխայի շահերից բխող այլ գործողությունների իրականացումը:

Բժշկական հաստատությունում գտնվող երեխային վերցնելու առնչությամբ, գործնականում որևէ խնդիր չի առաջանում: Վիճակագրական տվյալների համաձայն ՀՀ-ում մահճակալների քանակը հիվանդ երեխաների համար 2011թ.-ին կազմել է 20300 երեխա, 2012թ.-ին՝ 20800 երեխա, 2013թ.-ին՝ 20600 երեխա⁸³:

Համապատասխան կենսամակարդակի ապահովում

ՀՀ ԸՕ-ի 68-րդ հոդվածի համաձայն՝ ծնողները պարտավոր են պահել իրենց երեխաներին: Երեխաներին ապրուստի միջոց տրամադրելու կարգն ու պայմանները ծնողները որոշում են ինքնուրույն: Ծնողները կարող են համաձայնություն կնքել իրենց երեխաներին պահելու մասին (ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն) ՀՀ ԸՕ-ի 15-րդ գլխին համապատասխան: Եթե ծնողները ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններիս պահելու համար միջոցները (ալիմենտը) ծնողներից բռնագանձվում են դատական

⁸³ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանը թվերով - 2014. Կենսամակարդակ և սոցիալական ոլորտ, http://armstat.am/file/article/armenia_14_5.pdf, էջ 42:



կարգով: Պետությունը նախատեսում է աջակցության ծրագրեր, բայց ոչ բոլոր երեխաների համար: Այդ ծրագրերից կարող են օգտվել մանկատան սաները և շրջանավարտները և առհասարակ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված այլ անձինք:

Մասնավորապես «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի⁸⁴ 8-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական սոցիալական ծառայություններն են՝ խորհրդատվական օգնությունը, վերականգնողական օգնությունը, բնաիրային օգնությունը, կացարանով ապահովելը, խնամքը, իրավական օգնությունը, օրենքով սահմանված կենսաթոշակներ, նպաստներ և այլ դրամական վճարներ նշանակելը և վճարելը, օրենքով սահմանված գբաղվածության ծառայությունները և բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում ծառայությունները, օրենքով չարգելված այլ սոցիալական ծառայություններ: Այստեղ հարկ է նշել, որ թվարկված ծառայությունները տրամադրվում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, ում շարքին, ի թիվս այլոց, պատկանում են նաև ԱԾԽՄ երեխաները:

2014թ.-ի մարտի 6-ին ՀՀ Կառավարությամբ հաստատվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը, երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակելու և վճարելու կարգը: Զուգահեռաբար գործում է նաև 2014թ.-ի հունվարի 30-ի ՀՀ Կառավարության մեկ այլ որոշում, որով սահմանվել է 2014թ.-ի ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության, մինչև 2 տարեկան երախայի խնամքի, մինչև 2014թ.-ի հունվարի 1-ը ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստների չափերը և մինչև 2014թ.-ի հունվարի 1-ը ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման կարգը:

Սոցիալական ծրագրերի իրականացումը ՀՀ-ում գործնականում ունի որոշ բարդություններ: Դրանք են՝ ոչ բոլորի համար հասանելի լինելու հանգամանքը, ֆինանսավորման բարդությունները, նպաստ կամ այլ աջակցություն ստանալու գործընթացի բյուրոկրատական լինելը և այլն:

Հարցազրույցների ընթացքում նշվեց, որ երբեմն նույն ծնողներն ունեն տեղեկատվության պակաս՝ երեխայի լավագույն շահերից ելնելով երեխայի կարիքները ճիշտ գնահատելու ու անհրաժեշտ կենսապայմաններով ապահովելու համար: Մասնակիցներից մի քանիսը նշեցին, որ պետությունը հոգ չի տանում երեխաների զարգացման համար, ամբողջությամբ այդ բեռը թողնելով ծնողների կամ նրանց փոխարինող անձանց վրա: Ավելին, մանկապարտեզներում հաստիքով հոգեբաններ չկան, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին երբեմն տեղավորում են հատուկ կարիքավոր երեխաների հաստատություն՝ ինչով խոչընդոտում են երեխայի նորմալ զարգացմանն ու ձևավորմանը:

ԱԾԽՄ երեխաների խնամքը կազմակերպելով կամ խնամակալության, կամ որդեգրման, կամ պետական հաստատությունում տեղավորելու, կամ խնամատար ընտանիքին հանձնելու միջոցով՝ պետությունը պետք է կարգավորի երկու կարևորագույն խնդիր՝ խնամող անձի ընտրությունը և խնամքի համար անհրաժեշտ միջոցների ապահովումը (սնունդ, հագուստ և այլն): Հայաստանում ընդ խնամակալության, ընդ որդեգրման դեպքում պետությունը որևէ աջակցություն չի տրամադրում, իսկ պետական հաստատությունում տեղավորելու կամ խնամատար ընտանիքին հանձնելու դեպքում աջակցում է՝ երեխային ապահովելով բոլոր կենսապահովման պայմաններով, իսկ խնամատար ընտանիքին վճարելով ամսական դրամական միջոցներ:

Երեխայի խնամքի կազմակերպման այս տիպն էլ բավականին հազվադեպ է հանդիպում, մինչդեռ ֆինանսական տեսանկյունից խնամատար ընտանիքներին աջակցելն ավելի նպատակահարմար է, քան հատուկ հաստատություններ պահելը:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ պետությունը չի ապահովում այս հարցում ներգրավված՝ դերակատարների հավասարությունը և չի ստեղծում նպաստավոր պայմաններ երեխաներին խնամակալության հանձնելու կամ որդեգրելու համար: Դրանով է նաև պայմանավորված երեխայի փաստացի խնամակալության իրականացումն առանց պատշաճ ձևակերպման, իսկ նման դեպքերի մասին բարձրաձայնվում է, երբ դրա անհրաժեշտությունն առաջանում է պետական կամ տեղական ինքնակառավարման որևէ մարմնի հետ առնչվելիս:

⁸⁴ Այս օրենքն ընդունվել է 2014թ.-ի դեկտեմբերի 17-ին, ուժի մեջ է մտել 2015թ.-ի հունվարի 1-ին:

3.2.2 Երեխայի պաշտպանություն. պաշտպանության հարուկ միջոցներ

Փախստական երեխաներ

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ ուղեկցողները և այլ ընդհարումների հետևանքով բնակելի տարածությունից և անձնական գույքից զրկված փախստական երեխան ունի իր շահերի պաշտպանության իրավունք:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված 18 տարին չլրացած անչափահասը՝ ՀՀ տարածքում օրինական ներկայացուցիչ (ծնողներ (ծնող), խնամակալ, հոգաբարձու) չունեցող, ապաստան հայցող կամ փախստական երեխան է: Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահասներն ունեն ապաստան հայցողների կամ փախստականների համար սահմանված նույն իրավունքները: Լիազոր մարմինը պետք է աջակցի առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղավորմանը և խնամքի ապահովմանը, ինչպես նաև նրա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքների իրացմանը: Առանց ուղեկցողի անչափահաս ապաստան հայցողների կամ փախստականների հարցերի հետ առնչություն ունեցող, սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված բոլոր պետական մարմինները, հաշվի առնելով առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողների առանձնահատուկ վիճակը, առավելագույնս ելնելով նրանց շահերից՝ իրենց իրավասությունների շրջանակներում պետք է աջակցեն նրանց:

ՀՀ Կառավարությունը՝ 2009թ.-ի նոյեմբերի 19-ի N1440-Ն որոշմամբ հաստատել է «Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսապահովման պայմաններ տրամադրելու կարգը»: ՀՀ ՄԴԾ դիմած ապաստան հայցողներին և ապաստան հայցողի ընտանիքի անդամներին լիազոր մարմինը տեղավորում է ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում, որտեղ նրանց տրամադրվում են կենսապահովման պայմաններ մինչև իրենց դիմումի վերաբերյալ վերջնական որոշում ընդունելը: Ապաստանի մերժում ստացած փախստականներին ՀՀ ՄԴԾ կարող է թույլատրել շարունակել բնակությունը կենտրոնում, մինչև նրանք կլքեն ՀՀ-ն կամ ապաստան կստանան:

Չնայած գործնականում որևէ դեպք առանց ուղեկցության՝ երեխային փախստական ճանաչելու վերաբերյալ չի եղել, բայց եղել են բազմաթիվ դեպքեր, երբ ընտանիքի որևէ անդամի ապաստան հայցելու և փախստական ճանաչվելու արդյունքում երեխան նույնպես ձեռք է բերել նման կարգավիճակ: ՀՀ ՄԴԾ-ն ապահովում է փախստականների, ներառյալ՝ երեխաների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը՝ ներգրավելով միջազգային և հասարակական կազմակերպություններին: Սիրիայից փախստականների մեծ ներհոսքի պատճառով ՀՀ ՄԴԾ-ն դիմել է ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի հայաստանյան ներկայացուցչին, որն աջակցել է այս հարցում, անգամ տրամադրվել են գումարներ՝ բնակարանների վարձակալությունն ապահովելու նպատակով: Կառավարության 2009թ.-ի նոյեմբերի 19-ի N1440-Ն որոշման համաձայն՝ եթե ապաստան հայցողը ճանաչվում է փախստական, ապա նա այդ որոշումը ստանալուց հետո պետք է ազատի կենտրոնում գրառեցրած սենյակը: Գործնականում, քանի որ փախստական ճանաչված ապաստան հայցողն ի սկզբանե կարող է բնակության վայր չունենալ, նրան թույլատրվում է կարճատև մնալ կենտրոնում, այնուհետև նրան օգտագործման իրավունքով տրամադրում են առանձին բնակարան, որը նախկին հանրակացարանային համալիրի սենյակ է՝ բոլոր կոմունալ հարմարություններով (գտնվում է ք. Արովյանում կամ ք. Երևանում):

2014թ.-ի հուլիսի 17-ի N 769-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատվել է ՀՀ միգրացիայի ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրությունը՝ միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Եվրամիությունում և Միասնական տնտեսական տարածքում ընդունված մոտեցումներին և սկզբունքներին, համապատասխանեցնելուն ուղղված գործողությունների 2014-2016թթ. ծրագիրը, որն ունի նաև երեխաներին վերաբերող առանձին դրույթներ:

Կալանք և պատիժ

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ երեխային չի կարելի ձերբակալել, խուզարկել կամ կալանավորել այլ կերպ, քան սահմանված է օրենքով: Երեխայի ձերբակալման կամ կալանավորման մասին անհապաղ հայտնվում է ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչների: Ազատագրկման դատապարտված յուրաքանչյուր երեխա ունի օրենքով սահմանված կարգով ազատագրկման դատավճիռը բողոքարկելու իրավունք: Արգելվում է երեխային չափահասների հետ միասին կալանքի տակ պահելը: ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում երեխային քրեական պատասխանատվության ենթարկելիս փաստաբանի (հոգեբանի, մանկավարժի) ներկայությունը հետաքննության, նախաքննության և դատաքննության ընթացքում պարտադիր է: Երեխան պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ծնողների կամ մերձավոր ազգականների դեմ: Արգելվում է որպես վկա ցուցմունքներ վերցնելու կամ սեփական հանցանքը խոստովանելու համար երեխայի նկատմամբ բռնության, սպառնալիքի և այլ ապօրինի գործողությունների կիրառումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ցմահ ազատագրկման չեն կարող դատապարտվել հանցանքը կատարելիս տասնութ տարին չլրացած անձինք, իսկ մահապատիժն առհասարակ բացակայում է մեր օրենսդրության մեջ: Ավելին, օրենսգիրքը տարբերակված մոտեցում է դրսևորում նաև որոշակի ժամկետով ազատագրկում նշանակելիս: ՀՀ ՔԿՕ-ի 68-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ անջատ են պահվում անչափահասները՝ չափահասներից, բացառությամբ սույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի⁸⁵:

ՀՀ քր. դատ. օր.-ի 148-րդ հոդվածի համաձայն՝ հսկողության հանձնելն այն է, երբ անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի ծնողների, խնամակալների, հոգաբարձուների կամ փակ մանկական հիմնարկների վարչակազմի վրա, որտեղ նա պահվում է, պարտականություն է դրվում ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը:

Անչափահասների ձերբակալության և կալանավորման պայմաններն էապես տարբերվում են չափահասների նույնանուն պայմաններից: Օրինակ՝ ձերբակալված կամ կալանավորված անչափահասները ապահովվում են անվճար հատուկ սննդով («Ձերբակալված կամ կալանավորված անձնաց պահելու մասին» ՀՀ օրենքի հոդված 19), ձերբակալված կամ կալանավորված անչափահասների համար ստեղծվում են բարելավված նյութակենցաղային պայմաններ և նրանք օգտվում են ամենօրյա՝ 2 ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից, որի ընթացքում հնարավորություն է տրվում զբաղվել մարմնամարզությամբ (հոդված 27), անչափահասներին պատժախուց տեղափոխելը 5 օրից ավել չէ (հոդված 35) և այլն: Անչափահասների հետ տեսակցությունները քննարկվել են Կոնվենցիայի 9-րդ հոդվածը քննարկելիս:

Անչափահաս դատապարտյալներն ազատագրկման և կալանքի ձևով պատիժը և կալանավորումը՝ որպես խափանման միջոց, կրում են «Աբովյան» ՔԿՀ-ում: Չնայած անչափահաս դատապարտյալների պայմանները՝ մյուս դատապարտյալների պայմանների համեմատ բավական բարվոք են, դրանք չեն համապատասխանում միջազգային չափանիշներով այս կատեգորիայի դատապարտյալների համար կիրառվող պահանջներին: Մասնավորապես նշվել է, որ պետք է հնարավորինս ձգտել եվրոպական բանտային կանոններով նախատեսված պահանջների ներդրմանը ՀՀ-ում⁸⁶: Անչափահաս դատապարտյալներին ուղղելու համար

⁸⁵ Որոշակի ժամկետով ազատագրկման դատապարտված անչափահասը մինչև պատժի ժամկետը լրանալը պատիժը կրում է միևնույն ուղղիչ հիմնարկում, բայց ոչ ավելի, քան նրա քսանմեկ տարեկան դառնալը: Տասնութ տարին լրացած դատապարտյալի՝ բացասական վարքագիծ դրսևորելու դեպքում վերը նախատեսված առանձնահատկությունը չի գործում:

⁸⁶ Անչափահասների արդարադատությանը վերաբերող միջազգային չափանիշներն արտացոլված են Անչափահասների արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններում (Պեկինյան կանոններ), օրինազանցության կանխարգելման ՄԱԿ-ի ուղեցույցում (Ռիադի ուղեցույցը), և ազատագրկված անչափահասների պաշտպանության ՄԱԿ-ի կանոններում:

բավարար չեն այն միջոցները, որոնք ՀՀ ՔԿՕ-ի 16-րդ հոդվածի համաձայն կիրառվում են նաև չափահասների համար: Հարցազրույցների ընթացքում կարծիք հնչեց, որ երեխաների ուղղման համար պետք է հնարավորինս կիրառել մշակութային ու կրթական միջոցառումներ՝ էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ, թատրոն, սպորտային միջոցառումներ հասակակիցների հետ և այլն:

Այն, որ ազատագրվումը պետք է լինի բացառիկ միջոց անհերքելի է, բայց գործնականում դրա իրականացումը սահմանափակված է անչափահասների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված պատժատեսակներով: Մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածի համաձայն անչափահասի նկատմամբ կարող են նշանակվել հետևյալ պատիժներից մեկը՝ տուգանք, հանրային աշխատանքներ, կալանք կամ որոշակի ժամկետով ազատագրվում: Ընդ որում, տուգանքը նշանակվում է անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնազանձում: Հանրային աշխատանքներ ու կալանք չի նշանակվում մինչև 16 տարեկան անչափահասների նկատմամբ, հետևաբար մինչև 16 տարեկան անչափահասի պարագայում դատարանները, չունենալով այլընտրանք, նշանակում են որոշակի ժամկետով ազատագրվումը, բայց երբեմն կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, պատիժը պայմանականորեն չեն կիրառում՝ սահմանելով փորձաշրջան, որի կիրառումը կրում է ձևական բնույթ: Դրանով է նաև պայմանավորված պրոբացիայի ինստիտուտի ներդրման աշխատանքների իրականացումը ՀՀ-ում: Մասնավորապես՝ ՀՀ արդարադատության նախարարությունում ԱՄՆ դեսպանատան ֆինանսավորմամբ այժմ ընթանում են աշխատանքներ պրոբացիայի ինստիտուտի ներդրման ուղղությամբ: Իսկ դրա իրականացման իրավական հիմք է հանդիսանում ՀՀ նախագահի կարգադրությունը ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ժամանակացույցը սահմանելու վերաբերյալ: Այդ ծրագրի 4.3 կետի համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքում նախատեսվում է ստեղծել քրեակատարողական ծառայությունից անկախ և առանձին պրոբացիայի ծառայություն, որի համար պետք է մշակել պրոբացիայի ծառայության գործունեությունը կարգավորող իրավական ակտի նախագիծ և պրոբացիայի ծառայության աշխատակիցների շարունակական մասնագիտական ուսուցման համակարգ: Պրոբացիային բնորոշ մի շարք լիազորություններ իրականացնում են ՀՀ-ում քրեակատարողական ծառայության այլընտրանքային պատիժների կատարման բաժինը և սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումները: Հաշվի առնելով ՀՀ ապագա քրեական օրենսգրքում պրոբացիայի ծառայության նախատեսումը՝ որպես հանցագործի ուղղման և վերաինտեգրման մեխանիզմ, կրկնահանցագործությունների բարձր աստիճանի դեմ պայքարի արդյունավետ միջոց, այսօր արդիական է այնպիսի կառույցի ստեղծումը, որն արդյունավետ կերպով կիրականացնի այդ գործառնությունները:

Պատերազմ և բռնի կոնֆլիկտներ

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ զինապարտությունը ՀՀ պաշտպանությանը մասնակցելու՝ քաղաքացիների սահմանադրական պարտականությունն է: Զինապարտներ են համարվում նախագորակոչային, զորակոչային տարիքի և պահեստազորում հաշվառված արական, ինչպես նաև զինվորական մասնագիտություն ունեցող կամ զինվորական ծառայություն անցած իգական սեռի քաղաքացիները: Քաղաքացիների զինապարտությունն ընդգրկում է՝ զինվորական հաշվառումը, զինվորական ծառայության նախապատրաստությունը, զորակոչը և զինվորական ծառայությունը և պահեստազորում գտնվելը: Զինվորական հաշվառումը նախագորակոչիկների (16-18 տարեկան), զորակոչիկների (18-27 տարեկան) և պահեստազորում գտնվող քաղաքացիների հաշվառման ու հանրապետության զորակոչային, վարժապետության և զորահավաքային ռեսուրսների վերլուծության պետական համակարգն է: ՀՀ-ում պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան արական սեռի զորակոչիկները և մինչև 35 տարեկան առաջին խմ-

քի պահեստազորի սպաները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում:

Չնայած երեխաներին օրենքով սահմանված կարգով չեն զորակոչում, բայց ՀՀ-ում գործում է «Փոքր Միեր» կրթահամալիրը, որը ստեղծվել է 2004թ.-ի նոյեմբերի 11-ի N 1602-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ: Այդ որոշման 12-րդ կետի համաձայն՝ կրթահամալիրի գործունեության առարկան հանրակրթական տարրական, հիմնական, միջնակարգ, ինչպես նաև ռազմագիտական, մասնագիտացված ու այլ կրթական ծրագրերի (այսուհետ՝ ոչ հանրակրթական ծրագրեր) իրականացումն է ու այդ ծրագրերին համապատասխան կրթահամալիրի սովորողների (հայկազունների) դաստիարակության ապահովումը: Իսկ նպատակն է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված ու մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումը: Կրթահամալիր կարող են ընդունվել այն երեխաները, որոնց առողջությունը բավարարում է կրթահամալիրում սովորելու համար: Իգական սեռի երեխաների կրթության ու կենցաղի առանձնահատկությունները սահմանում է խորհուրդը: Իգական սեռի սովորողների քանակը սահմանափակ է, և այն սահմանվում է խորհրդի որոշմամբ: Կրթահամալիրում սովորողների ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով: Կրթահամալիր ընդունվելու համար պարտադիր է միայն երեխայի մեկ ծնողի կամ նրա մեկ օրինական ներկայացուցչի, ինչպես նաև երեխայի գրավոր համաձայնությունը:

Բացի «Փոքր Միեր» կրթահամալիրից ՀՀ-ում գործում է ՀՀ պաշտպանության նախարարության Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը, որտեղ ընդունելությունը կատարվում է հիմնական կրթության 9-րդ դասարանի ծրագրի ծավալով: Փաստացի ՀՀ տարածքում երեխաներին զինված հակամարտություններում ներգրավելու կամ զինված հակամարտություններից երեխաների տուժելու դեպքերի մասին հայտնի չէ, բայց այն փաստը, որ 15 տարին չլրացած երեխաները կարող են ներգրավվել ռազմական վարժարանում կամ կրթահամալիրում որպես զինվորներ, պետք է վերանայվի:

Ջոհ դարձած երեխաների վերականգնում

Երեխաների ֆիզիկական կամ հոգեբանական վերականգնմանը և սոցիալական վերաինտեգրմանը վերաբերող առանձին իրավական ակտ գոյություն չունի: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը, բայց այն չի վերաբերում ֆիզիկական կամ հոգեբանական վերականգնմանը և սոցիալական վերաինտեգրմանը: Առանձին հանցագործությունների պարագայում, օրինակ՝ թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված երեխաներին այդպիսի աջակցություն տրամադրվում է⁸⁷: Քանի որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների աջակցությունն արդեն քննարկվել է (Կոնվենցիայի հոդված 27-ի մեկնաբանությունը), այստեղ այն չի ներկայացվում:

Երեխաների վերականգնման և վերաինտեգրման որոշ հարցերին անդրադարձ է կատարվել նաև «Սեռական և ընտանեկան բռնության զոհերի ուղղորդման կարգի» նախագծում, բայց միասնական համապարփակ փաստաթուղթ, որն ուղղված կլինի երեխաների վերականգնմանն ու վերաինտեգրմանը, գոյություն չունի: Երեխաների՝ որպես հանցագործության զոհի, պաշտպանվածությունն առավել անմխիթար է ՀՀ արդի պայմաններում: Չնայած որոշ հանցագործությունների պարագայում՝ երեխայի թրաֆիքինգ կամ շահագործում, բռնաբարու-

⁸⁷ 2014թ.-ի դեկտեմբերի 17-ին ընդունված «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանվում է, որ ցանկացած զոհ և հատուկ կատեգորիայի զոհ ունի օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցություն և պաշտպանություն ստանալու իրավունք: Ջոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի պաշտպանության և աջակցության ձևերը, տեսակները, տևողությունը, չափերը որևէ կերպ չեն կարող փոխկապակցված կամ պայմանավորված լինել իրավապահ մարմինների կողմից ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվող գործողություններին նրանց մասնակցության հանգամանքով: Աջակցության տրամադրումն ապահովվում է ՀՀ ԱԱՀ-ի կողմից:

թյուն, սեռական այլ հանցագործություններ, երեխաների իրավունքները դեռ պաշտպանված են, ապա այլ հանցագործությունների պարագայում որևէ առանձնահատկություն նախատեսված չէ (չհաշված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով նախատեսված որոշ առանձնահատկությունները):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծն արդեն իսկ ներառել է որոշ դրույթներ կամ ստանձնած պարտավորություններ, որոնք կիրառելի կլինեն նաև ՀՀ-ում, մասնավորապես՝ հոգեբանի ներգրավումն անչափահասի մասնակցությամբ



քննչական գործողության կատարմանը, դատարանի նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ դատական նիստին հանրության ներկայացուցիչների և լրատվության միջոցների մասնակցությունը կամ նրանց մի մասին դատարանի որոշմամբ արգելելը, եթե դա անհրաժեշտ է ապահովելու անչափահասի իրավաչափ շահերի պաշտպանությունը, անչափահասին հարցաքննելը տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով) և այլ հարցեր:



Որոշ կառույցների ներկայացուցիչների կարծիքով՝ զոհերի շահերի լավագույն պաշտպանության միջոց է հանդիսանում հանցագործի նկատմամբ խիստ պատիժ նշանակելը, ինչն արդարացված չէ և ցանկացած հանցագործության դեմ պայքարում պետք է համակցված կիրառվեն կանխարգելումը, պատիժը և աջակցությունը:

Անչափահասների արդարադատություն

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են այն կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով, իսկ 13-րդ հոդվածի համաձայն՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն: Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քր. դատ. օր.-ով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը: Վերը նշված նորմերն ընդհանուր են և կիրառելի են նաև հանցանք կատարելու մեջ կասկածվող անչափահասների նկատմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը:



Այն անձինք, որոնց տասնչորս տարին լրացել է մինչև հանցանքը կատարելը, ենթակա են քրեական պատասխանատվության սպանության սահմանափակ թվով հանցագործությունների համար: Եթե անձը հասել է վերը նախատեսված տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ընդունակ չի եղել ամբողջ չափով գիտակցել իր արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարել դա, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է, իսկ 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք սույն օրենսգրքով նախատեսված կարգով իրավունք ունի ստանալ իրավաբանական օգնություն: Քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է որոշում կայացնել կասկածյալին կամ մեղադրյալին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին՝ ելնելով նրա գույքային դրությունից:

Սույն օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական միջոցների հաշվին հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնել սույն օրենսգրքով սահմանված իրենց իրավունքները:

Երեխաների անձնական տեղեկությունների պահպանման հարցը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածով, որի համաձայն՝ դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդությամբ բացառիկ դեպքերում, եթե դա չի վնասի արդարադատության իրականացմանը կամ չի հանգեցնի դատավա-

րության հրապարակայնության սկզբունքի չարդարացված սահմանափակմանը, դատարանի որոշմամբ դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել նաև՝

- 1) անձնական և ընտանեկան կյանքին, անձի պատվին և արժանապատվությանն առնչվող հանցագործությունների վերաբերյալ գործերով,
- 2) անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով,
- 3) քրեական դատավարությանը մասնակցող անձանց կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության անհրաժեշտության դեպքում:

Անչափահասների արդարադատության մասին առանձին օրենսդրություն ՀՀ-ում դեռ գոյություն չունի: Անչափահասների արդարադատությանը վերաբերող դրույթներ սահմանվում են ՀՀ քրեական օրենսգրքով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ՀՀ ՔԿՕ-ով, ինչպես նաև այլ օրենքներով: Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին 2014թ.-ի փետրվարի 27-ի N303-Ն ՀՀ Կառավարության որոշման 50-րդ կետի համաձայն՝ անչափահասների վերաբերյալ քրեական գործերով օրենսդրորեն պետք է նախատեսել գաղտնիության պահպանման լրացուցիչ երաշխիքներ, քանի որ գործող մեխանիզմները բավարար չեն: Երեխայի անձնական կյանքը հարգելու իրավունքի ապահովումը կամ իրագործումը և դռնփակ դատական քննությունների անցկացումը պետք է հստակեցվի: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 169-րդ հոդվածի համաձայն՝ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող գաղտնիքի պահպանման՝ օրենքով նախատեսված միջոցներ: Վարույթի ընթացքում չպետք է կամայականորեն հավաքվեն, պահվեն, օգտագործվեն կամ տարածվեն անձի անձնական կամ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություններ: Վարույթն իրականացնող մարմնի պահանջով վարույթային գործողությունների մասնակիցները պարտավոր են չհրապարակել նշված տեղեկությունները, որի համար նրանցից վերցվում է ստորագրություն: Անձնական կամ ընտանեկան կյանքի առավել զգայուն հարցերին վերաբերող ապացույցները վարույթի շահագրգիռ մասնակցի պահանջով հետազոտվում են դռնփակ դատական նիստում: Չնայած իրականացված գործողություններին, անչափահասների մասնակցությամբ դատավարությունների ժամանակ դեռ հանդիպում են խնդիրներ:

Անչափահասներին ազատազրկման ենթարկելը ձևավորում է «հանցագործի» ինքնություն: Նրանք սովորում են հանցագործության հնարքներ, խոսում են հանցագործների ժարգոնով և ընտելանում են հանցագործների մշակույթին, որն ամենայն հավանականությամբ կամրապնդի անչափահասի սեփական ընկալումն իբրև հանցագործի: Երբ նրանք մեկ անգամ իրենց ընկալում են որպես հանցագործ, ինչպես նաև հանցագործ են ճանաչվում լայն հասարակության կողմից, նրանց համար ավելի դժվար է լինում հետագայում փոխվել և հարմարվել դպրոցական և ընտանեկան կյանքին: 2012-2013թթ.-ին անչափահասների նկատմամբ պատիժների վիճակագրությունն է. 2013թ.-ին ազատազրկման է դատապարտվել 69 անչափահաս⁸⁸, որոնցից 44-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, այլ պատիժներ կիրառվել է 14 անչափահասի նկատմամբ, համաներման ակտ կիրառվել է 15 անչափահասի նկատմամբ: 2012թ.-ին ազատազրկման է դատապարտվել 76 անչափահաս⁸⁹, որոնցից 52-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, այլ պատիժներ կիրառվել են 11 անչափահասի նկատմամբ: Համաներման ակտ չի կիրառվել որևէ անչափահասի նկատմամբ⁹⁰:

⁸⁸ 69 անչափահասներից 8-ը դատապարտվել են մինչև 1 տարի ժամկետով, 8-ը՝ 1-2 տարի ժամկետով, 18-ը՝ 2-3 տարի ժամկետով, 26-ը՝ 3-5 տարի ժամկետով և 9-ը՝ 5-8 տարի ժամկետով:

⁸⁹ 76 անչափահասներից 8-ը դատապարտվել են ազատազրկման մինչև 1 տարի ժամկետով, 12-ը՝ 1-2 տարի ժամկետով, 13-ը՝ 2-3 տարի ժամկետով, 39-ը՝ 3-5 տարի ժամկետով, 3-ը՝ 5-8 տարի ժամկետով և 1-ը՝ 8-10 տարի ժամկետով:

⁹⁰ http://court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=4

Առաջարկություններ

Երեխայի իրավունքներն ու շահերը պաշտպանելու, երեխայի դերակատարումն իրեն վերաբերող հարցերի վերաբերյալ ուժեղացնելու ու երեխայակենտրոն քաղաքականություն մշակելու նպատակով՝ ներկայացվում ենք հետևյալ առաջարկությունները.

- Եվ օրենքներով, և՛ այլ իրավական ակտերով, և՛ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպերով ամրագրված է, որ խնամակալության և հոգաբարձության մարմինն օրենքով սահմանված կարգով պարտավոր է անցկացնել երեխայի կյանքի հետազոտություն, բայց այն չպետք է հանդիսանա լոկ վարչարարություն, և բովանդակային տեսանկյունից պետք է լինի ամբողջական, օբյեկտիվ, փաստերի վրա հիմնված ու պատճառաբանված:
- Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի կարգավիճակը վերանայման կարիք ունի, մասնավորապես՝ պետք է հստակեցնել հանձնաժողովի գործառույթները՝ վերջինիս օժտելով պարտադիր իրավական ուժ ունեցող որոշումներ կայացնելու լիազորությամբ:
- Երեխայի պաշտպանության եռաստիճան համակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է ուժեղացնել տեղական, համայնքային մակարդակում երեխայի պաշտպանությունը՝ համապատասխան մասնագետներով, ֆինանսական միջոցներով, պայմաններով ապահովելով հանձնաժողովներին և նրանց ընձեռնելով լիազորությունների առավել լայն շրջանակ:
- Երեխայի իրավունքներին և դրանց պաշտպանությանը վերաբերող դրույթներ առկա են տարբեր իրավական ուժ ունեցող և տարբեր բնույթի իրավական ակտերում: Նման «ոլորտային ցրվածությունն» անդրադառնում է ինչպես այդ իրավունքների ընկալման, այնպես էլ դրանց իրագործման ու պաշտպանության վրա: Հետևաբար, ՀՀ-ի համար ցանկալի կլինի ունենալ ոլորտային մեկ միասնական և կոդիֆիկացված փաստաթուղթ:
- Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ ծնողը պատիժ է կրում ՔԿՀ-ում կամ կալանավորված է, իսկ նրա երեխան գտվում է պետական հաստատությունում: Քանի որ երկուսն էլ գտնվում են պետական վերահսկողության ներքո, հետևաբար պետությունը պետք է ապահովի այդ անձնանց տեսակցության կազմակերպումը՝ դրանով ապահովելով երեխայի՝ ծնողի հետ շփվելու իրավունքը: Այդ տեսակցությունները պետք է կազմակերպվեն այդ հաստատության և ուղղիչ հիմնարկի կողմից համատեղ:
- ՀՀ Կառավարության 1998թ.-ի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման համաձայն՝ 16 տարին չլրացած ՀՀ քաղաքացուն ՀՀ քաղաքացու անձնագիր տրվում է ըստ ցանկության՝ մեկ ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Հետևաբար մեկ ծնողն իր ցանկությամբ որոշում է երեխայի՝ ՀՀ սահմանն օրինական հատելը, բայց այս պարագայում մյուս ծնողը փաստացի կարող է անիրազեկ լինել երեխայի տեղափոխման մասին: Հետևաբար, համաձայնելով, որ երեխայի ազատ տեղաշարժի իրավունքը կարևոր է և անհարկի չպետք է սահմանափակվի, միևնույն ժամանակ պետք է մշակել համապարփակ մեխանիզմներ երեխային հարկ եղած դեպքում վերադարձնելու և մյուս ծնողի իրավունքներն ապահովելու համար:
- Պետք է մշակել երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման ու բռնության ենթարկված երեխաների աջակցության կարգը՝ ներգրավելով ոչ միայն պետական լիազորված մարմիններին (ՀՀ ԱՍՀՆ, ՀՀ ԿԳՆ, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ ոստիկանություն և այլն), այլև երեխաների պաշտպանության ոլորտի հասարակական կազմակերպություններին: Մասնավորապես այդ կարգը պետք է վերաբերի բռնության ենթարկված ցանկացած երեխայի, իսկ բացառություններ պետք է նախատեսվեն բռնության որոշ դրսևորումների, օրինակ՝ թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված երեխաների համար՝ ելնելով այդ բռնության առանձնահատկություններից և հաշվի առնելով այլ իրավական ակտերով դրա կարգավորված լինելը: Առաջարկվող փաստաթուղթը կարող է ունենալ բռնության ենթարկված երեխայի ուղղորդման կարգի տեսք:
- Հարկ է վերացնել երեխաների նկատմամբ կիրառվող ոչ մանկավարժական բնույթի դաստիարակչական մեթոդները, ինչպիսիք են՝ «անկյուն կանգնեցնելը», «ականջ քաշելը», «ծեծելը»,

«մութ տեղում պահելը» և այլն: Այդ նպատակով անհրաժեշտ է և՛ ծնողներին, և՛ երեխաների խնամքով ու դաստիարակությամբ զբաղվող այլ անձանց անվճար բաժանել տեղեկատվություն դաստիարակչական մեթոդների մասին, իսկ մասնագետներին՝ վերապատրաստել:

- ՀՀ-ում պետք է քայլեր ձեռնարկել «չգրանցված խնամակալություն» երևույթը վերացնելու ուղղությամբ՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով, որպեսզի փաստացի խնամակալ հանդիսացող անձը շահագրգռված լինի խնամակալությունը գրանցելու, և դա հարկադրված չիրականացնի միայն այն դեպքում, երբ դրա կարիքն է առաջանում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ առնչվելիս:
- ՀՀ օրենսդրությամբ՝ մինչև 2 տարեկան երեխա ունեցող մայրը ստանում է համապատասխան նպաստ, բայց մինչև երեխայի 3 տարին լրանալը վերջինիս խնամքի համար կարող է գտնվել արձակուրդում: Հետևաբար կարգավորված չէ 2-ից 3 տարեկան երեխա ունեցող կանանց ապրուստի, հետևաբար նաև երեխայի ապրուստի պայմանները: Այդ մեկ տարվա կտրվածքով կինը ստանում է օրենսդրորեն ամրագրված իրավունք երեխային խնամելու, բայց դրա իրականացման որևէ մեխանիզմ իրավական ակտերում նախատեսված չէ: Հետևաբար, եթե չլինի որևէ օգնող անձ (տատիկ, մայր, քույր, դայակ և այլն), երեխայի ապրուստը հոգալիս բարոյություններ կառաջանան:
- Գիշերօթիկ հաստատությունները պետք է վերափոխել այլ ծառայությունների, քանի որ այնտեղ պահվող երեխաների մոտ 80%-ն ունի գոնե մեկ ծնող, ինչն ակնհայտ վկայում է, որ երեխայի խնամքի համար անհրաժեշտ նվազագույն պայմանների առկայության, ֆինանսական և այլ աջակցության դեպքում, ծնողը կիրականացնի իր պարտականությունները՝ առանց երեխային այդ հաստատություն հանձնելու:
- Երեխայի խնամքի վերաբերյալ՝ նրա շահերից բխող որոշում կայացնելը պետք է կատարվի ներառելով երեխայի օրինական ներկայացուցիչներին, ում տրամադրված կլինի իր իրավունքները պաշտպանելու համար անհրաժեշտ ժամանակ և հնարավորություն՝ ներառյալ մասնագիտական աջակցությունը: Որոշում կայացնելիս դատարանը կամ վարչական մարմինը պետք է առաջնորդվի փաստերի ճշգրիտ գնահատմամբ, ծրագրավորի երեխայի խնամքն ու դաստիարակությունը և ձևավորի կոնկրետ երեխայի լավագույն շահերից բխող կոնկրետ մեխանիզմներ, որոնց կազմմանն անհրաժեշտ է որակավորում ունեցող մասնագիտական թիմի ներգրավումը: Այդ ամենին զուգահեռ երեխայի հետ պետք է իրականացվեն բացատրական, խորհրդատվական այցեր՝ հաշվի առնելով երեխայի, նրա ծնողների կամ խնամակալների կարողությունները:
- Անհրաժեշտ է վերանայել ծնողական իրավունքներից զրկելու կամ դրանք սահմանափակելու հիմքերը: Օրինակ՝ «կատարել են իրենց երեխաների դեմ դիտավորյալ հանցագործություն» հիմքը սպառիչ և ամբողջական չէ: Այս հիմքը պետք է ներառի նաև երեխաների դեմ անզգույշ հանցագործություններ կատարելը:
- Պետք է խստացնել որդեգրման դեպքում իրենց վրա դրված ծնողական պարտականությունները կատարելուց խուսափող անձանց այդ իրավունքներից զրկելու հիմքերը՝ խախտումների առավել վաղ փուլերում որդեգրումը դադարեցնելով: Օրինակ՝ պարտադիր չէ, որ որդեգրողները դաժանաբար վարվեն որդեգրված երեխայի հետ, այլ բավարար է բռնության ցանկացած դրսևորումը, կամ պարտադիր չէ, որ նրանք համարվեն քրոնիկ ալկոհոլամոլությամբ տառապող, անգամ պարբերաբար դրանց չարաշահումը՝ առանց քրոնիկ բնույթի, պետք է բավարար լինի որդեգրումը վերացնելու համար:
- Պետությունը, ապահովելով երեխայի խնամքի կազմակերպմանը ներգրավված դերակատարների հավասարությունը, պետք է ստեղծի նպաստավոր պայմաններ երեխայի խնամքն ընտանիքում կազմակերպելու համար, ավելին՝ հնարավորինս նպաստի երեխայի վերադարձին ընտանիք, եթե երեխայի ընտանիքից բաժանման հիմնական պատճառները հարթվել կամ վերացվել են: Միայն այդ քայլից հետո պետությունը պետք է կազմակերպի երեխայի խնամքի այլ ձևերը:
- Պետք է սահմանափակել կամ կրճատել ժամանակավորապես մանկատուն բերված երեխային այնտեղ պահելու ժամկետը, որից հետո երեխան կհամարվի առանց ծնողական

խնամքի մնացած և դա հնարավորություն կընծեռի կազմակերպել երեխայի խնամքի այլընտրանքային տարբերակ:

- Պետությունը պետք է ոչ միայն մշակի որակի համապատասխան ցուցիչներ երեխաներին խնամակալության հանձնելու, որդեգրելու, խնամքի հաստատություն հանձնելու կամ և խնամատար ընտանիք տեղավորելու համար, այլ նաև իրականացնի մշտադիտարկում, արդյունավետության հաշվառում, վերլուծություն և դրա հիման վրա ոլորտի բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացում:
- Չնայած անչափահաս դատապարտյալների պայմանները՝ մեծահասակ դատապարտյալների համեմատ բավական բարվոք են, դրանք չեն համապատասխանում միջազգային չափանիշներով այս կատեգորիայի դատապարտյալների համար կիրառվող պահանջներին: Այսինքն, ՀՀ-ն պետք է հնարավորինս ձգտի Եվրոպական բանտային կանոններով նախատեսված պահանջների ներդրամանը ՀՀ քրեակատարողական համակարգում: Անչափահաս դատապարտյալներին ուղղելու համար բավարար չեն այն միջոցները, որոնք ՀՀ ՔԿՕ-ի 16-րդ հոդվածի համաձայն կիրառվում են նաև չափահասների համար: Երեխաների ուղղման համար պետք է հնարավորինս կիրառել մշակութային ու կրթական միջոցառումներ՝ էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ, թատրոն, սպորտային միջոցառումներ հասակակիցների հետ և այլն:
- ՀՀ-ում պետք է քրեականացնել անօրինական որդեգրումը, խնամատար ընտանիքի անդամի կողմից իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, խնամատար ընտանիքի անդամի կողմից լիազորությունները չարաշահելը, խնամակալության հանձնաժողովների անդամի կողմից իր լիազորությունները չարաշահելը, անչափահասներին զինված հակամարտություններում ներգրավելը, ինչպես նաև այլ՝ հասարակական բարձր վտանգավորություն ունեցող գործողությունները, որոնք կարող են տեղ գտնել երեխաների խնամքի և դաստիարակության ոլորտում:
- Անհրաժեշտ է վերանայել երեխայի առևանգմանը, մասնավորապես՝ միջազգային առևանգմանը վերաբերող օրենսդրությունն ու ձևավորված դատական պրակտիկան՝ քրեական պատասխանատվության ենթարկելով նաև այն ծնողներին, ովքեր մյուս ծնողի կարծիքն անտեսելով կամ կամքին հակառակ երեխային տեղափոխել են արտասահման կամ չեն վերադարձրել այնտեղից:
- Անհրաժեշտ է վերանայել ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածի կիրառման պրակտիկան: Քանի որ այդ հոդվածում ուղղակիորեն ամրագրված է, որ ծնողի կողմից երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը համարվում է հանցագործություն, դատական պրակտիկան պետք է ձևավորել այն ուղղությամբ, որ ՀՀ ԸՕ-ի 11-րդ գլխում ամրագրված՝ երեխային դաստիարակելու ծնողների պարտականություններից որևէ մեկի չկատարումը պետք է հանգեցնի պատասխանատվության, մասնավորապես՝ բացասական հետևանքի դեպքում:
- «Փոքր Միեր» կրթահամալիրում և ՀՀ ՊՆ Մ. Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանում որպես սովորող ներգրավվում են 15 տարին չլրացած երեխաները, ինչը հակասում է Կոնվենցիայի 38-րդ հոդվածին և վերանայման կարիք ունի:
- Անհրաժեշտ է վերանայել անչափահասներին քրեական պատասխանատվության ենթարկելու համակարգը: Պետք է զարգացնել քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցների կիրառումը՝ դրա համար անհրաժեշտ օրենսդրական բազա ստեղծելով և դրա նյութական հիմքը տրամադրելով: Ավելին, ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներդրվող պրոբացիայի ինստիտուտը պետք է հատուկ կարևորի երեխայի լավագույն շահերն ու ապահովի անչափահասների արդարադատության հիմնական սկզբունքների կիրառումը ՀՀ-ում:
- ՀՀ-ում անհրաժեշտ է կիրառելի դարձնել երեխայի հայացքների նկատմամբ հարգանքի և պատշաճ ուշադրության սկզբունքը, և իր հայացքները ձևակերպելու ունակ երեխայի համար պետք է ապահովված լինեն դրանք ազատորեն արտահայտելու իրավունքն այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային, նրա հետաքրքրություններին, իրա-

վունքներին, շահերին և նախասիրություններին: Սեփական հայացքների ազատ արտահայտման իրավունքն ամրագրված է ՀՀ ԸՕ-ում, որտեղ նախատեսվում է 10-ամյա տարիքային շեմը միայն որոշակի դեպքերում, ինչն արդարացված չէ: Հետևաբար առաջարկում ենք ՀՀ ԸՕ-ում կատարել փոփոխություն, այն է՝ վերացնել տարիքային այդ սահմանափակումը, սեփական հայացքների ազատ արտահայտման իրավունքը վերապահել՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և գիտակցական ունակությունները և կոնկրետ իրավիճակի առանձնահատկությունները:

- Երեխաների իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմն առավել կատարյալ դարձնելու համար արդյունավետ կլինի երեխայի իրավունքների պաշտպանի ինստիտուտի կամ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում առանձին բաժնի ստեղծումը՝ հիմնված անկախության, ինքնավարության, անկողմնակալության, թափանցիկության, արդարության, հավասարության, պրոֆեսիոնալիզմի և բազմակարծության սկզբունքների վրա: Այն պետք է պայմանավորված լինի ավելի ուղղակի և ակտիվ մոտեցմամբ, իրագործվի հանրային մարմինների, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցության միջոցով:

3.3 ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.3.1 Երեխաների՝ նախադպրոցական կրթություն ստանալու իրավունքը

Ըստ Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական ծրագրի նախատեսված է նախադպրոցական կրթության հասանելիությունը Հայաստանում մինչ 2017թ. հասցնել 90%-ի: Սակայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն, 2013թ. ՀՀ-ում գործել է 697 համայնքային, գերատեսչական և ոչ պետական նախադպրոցական հաստատություն (ՆԴՀ), որոնցից 491-ը՝ մանկապարտեզ, 179-ը՝ մսուր-մանկապարտեզ, 27-ը՝ դպրոցահեն նախադպրոցական կրթության կենտրոններ կամ վաղ մանկության զարգացման կենտրոններ: Այս թվերին պետք է ավելացնել նաև միջազգային կազմակերպությունների ջանքերով հիմնադրված նախադպրոցական կրթության կենտրոնները: Նախադպրոցական կրթության հասանելիությանն ուղղված պետական և միջազգային բազմաթիվ ծրագրեր են իրականացվում: Համաշխարհային Բանկի վարկային ծրագրի շրջանակներում ԿԳՆ ԾԻԳ-ի ծրագրերի արդյունքում 2010-2014թթ. -ին հիմնադրվել են 290 դպրոցահեն նախադպրոցական կենտրոններ, որտեղ ներգրավված է շուրջ 8000 երեխա: 2010-2014թթ. -ին 12 դպրոցահեն նախադպրոցական կենտրոններ հիմնադրվել են «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության կողմից:

Ըստ ԱՎԾ տվյալների ՆԴՀ-ների ընդհանուր քանակից 648-ը համայնքային ենթակայության է, 5-ը՝ գերատեսչական և 44-ը՝ ոչ պետական: Երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում (0-5⁹¹ տարեկան երեխաների թվաքանակից) կազմել է 27.3%՝ քաղաքային համայնքներում՝ 35.2%, գյուղական համայնքներում՝ 14.3%: Մեկ խմբում երեխաների միջին թվաքանակը կազմել է 28 երեխա, տեղերի փաստացի զբաղվածությունը՝ 86.6%: Միջին հաշվով մեկ ՆԴՀ հաճախել է 99 երեխա, մեկ մանկավարժին բաժին է ընկել 12 երեխա: Ամենախոցելի գյուղաբնակ նախադպրոցական տարիքի երեխաներն են, քանի որ գյուղական համայնքներում նախադպրոցական կրթություն տրամադրող կենտրոններ հիմնականում չեն գործում⁹²: Ուսուցիչ-երեխա հարաբերակցությամբ Հայաստանը գտնվում է բարվոք դիրքերում, քանի որ համաձայն միջազգային ստանդարտների ուսուցիչ-երեխա օպտիմալ հարաբերակցությունը 1/15 է⁹³:

⁹¹ Չնայած նախադպրոցական կրթության տարիք է համարվում 2-6, ԱՎԾ տվյալները ներկայացված են 0-5 տարիքային խմբի համար:

⁹² ԱՎԾ, ՀՀ սոցիալական վիճակը 2013:

⁹³ SABER, ECD, Armenia, 2012.



ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ջանքերով Հայաստանում մշակվել են նախադպրոցական կրթության պետական ստանդարտներ, որոնք սահմանում են կրթության բովանդակությունը: Համաձայն այդ ստանդարտների նախադպրոցական կրթության լեզուն պետք է լինի երեխաների մայրենի լեզուն: Այս տեսանկյունից էթնիկ փոքրամասնությունները գտնվում են խոցելի դիրքերում, քանի որ նախադպրոցական կենտրոնների լեզուն հիմնականում կամ հայերեն է կամ ռուսերեն:

Միջազգային բազմաթիվ ծրագրեր են իրականացվում Հայաստանում ուղղված նախադպրոցական կրթության կենտրոնների հիմնադրմանը, սակայն դրանց շարունակականությունը հարցականի տակ է, քանի որ հաճախ միջազգային ծրագրերի շրջանակներում ներդրված կենտրոնների հետագա շահագործումը, մնալով համայնքային ֆինանսավորման վրա, ռիսկի տակ է գտնվում:

Նախադպրոցական տարիքի հաշմանդամություն ունեցող երեխաների համար բացակայում են հարմարեցված նախադպրոցական կենտրոնները: Սակայն ըստ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից իրականացված հետազոտության տվյալների, 2-6 տարիքային խմբում հաշմանդամություն ունեցող երեխաների 28%-ը հաճախում կամ հաճախել է մանկապարտեզ⁹⁴:

3.3.2 Երեխաների՝ դպրոցական կրթություն սրանապու իրավունքը

Ընդհանուր հանրակրթական դպրոցը (1-9 դասարաններ) Հայաստանում պարտադիր է, յուրաքանչյուր երեխա կարող է ուսումնական հաստատությունն ընտրել ըստ իր, իր ծնողների կամ իր օրինական ներկայացուցչի ցանկության:

⁹⁴ Խոսքը ներառման մասին է, ՄԱԿ-ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, 2012, էջ 35:

Կրթության իրավունքի իրականացման ուղղությամբ ընդունվել են օրենքներ, որոնց շատերը համապատասխանում են միջազգային լավագույն չափանիշներին: Սակայն ոլորտը կարգավորող օրենքների կիրառումն ապահովող իրավական ակտերն ու դրանցով սահմանվելիք համապատասխան մեխանիզմները հաճախ ժամանակին չեն ընդունվում կամ չեն ապահովում այդ օրենքների պատշաճ կիրառումը: Չի գործում իրականացվող ծրագրերի հստակ գնահատման, մշտադիտարկման կամ ծախսերի և ստացված արդյունքների գնահատման համակարգ:

Ըստ Այլընտրանքային զեկույցի՝ հակասություններ կան նաև գործող օրենքների, օրինակ՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 1999թ.-ին) և «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 2005թ.-ին) միջև: Վերջին օրենքի նպատակահարմարությունը բազմիցս քննարկվել է կրթության ոլորտում աշխատող ՀԿ-ների և միջազգային կառույցների հետ, քանի որ այն սահմանափակում է ներառական կրթության գաղափարը՝ սահմանելով միայն հաշմանդամության որոշակի խմբերին պատկանող երեխաների համար կրթության տրամադրման առանձնահատկությունները: Մինչդեռ ներառական կրթությունը հանրակրթության մեջ բոլոր երեխաների մասնակցության ապահովումն է՝ անկախ նրանց կրոնից, սոցիալական ծագումից, կարգավիճակից և ազգային պատկանելիությունից⁹⁵:

2013-2014 ուսումնական տարում հանրապետությունում գործել են հանրակրթական ծրագրեր իրականացնող 1434 դպրոցներ, աշակերտների թվաքանակը կազմել է 360 446 մարդ, որի 47.9%-ը աղջիկներ են: Դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը⁹⁶ կազմել է 87.9%, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է 94.1%, հիմնական դպրոցում՝ 92.6%, ավագ դպրոցում՝ 74.0%: Ավագ դպրոցում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը ցածր է, քանի որ հիմնական դպրոցն ավարտելուց հետո համապատասխան տարիքի բնակչության 18.2%-ն ուսումը շարունակել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Ինչպես նշվեց, ընդհանուր հանրակրթական դպրոցը (1-9 դասարաններ) Հայաստանում պարտադիր է, սակայն երեխաների կրթության իրավունքը ոչ միշտ է ապահովված: 2005 թվականի ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ուսումնասիրության համաձայն⁹⁷ 18,000 երեխա դուրս է մնացել դպրոցից, 2007-ին այդ թիվը հասել է 7,000-ի: Սա նաև հետևանք է նրա, որ դպրոցից բացակայության թույլատրելի սահմանը 240 ժամից իջել է 180-ի, այժմ նաև՝ 160 ժամի: Այսինքն՝ դպրոցից դուրս մնացողների թվի նվազումը կրթության մատչելիության մակարդակի բարձրացման մասին չի վկայում:

2011թ.ին Հայաստանի Հելսինկյան կոմիտեն իրականացրել է մշտադիտարկում, որի արդյունքները փաստում են, որ Հայաստանում շատ երեխաների կրթության իրավունքը ապահովված չէ, քանի որ այդ երեխաները չեն ստանում պարտադիր կրթություն: «Նույնիսկ հանրային ծառայողները հաճախ տեղյակ չեն այդ երեխաների մասին»⁹⁸: Սոցիալապես խոցելի շատ երեխաներ դուրս են մնում պարտադիր կրթությունից:

Ըստ ԱՎԾ տվյալների դպրոցից հեռացած երեխաների ավելի քան 50%-ը հեռացել է սոցիալական պայմանների պատճառով:

Դպրոցից դուրս մնացած երեխաների կամ պարտադիր կրթություն չստացողների թվի վերաբերյալ հավաստի և իրական տվյալներ ստանալու համար պետք է հաշվի առնել նաև այն

⁹⁵ Այլընտրանքային զեկույց, ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի համաձայն ներկայացվող Հայաստանի Հանրապետության երրորդ եվ չորրորդ պարբերական համատեղ զեկույցների, 2012թ, 45 կազմակերպությունների համատեղ զեկույց, էջ 30:

⁹⁶ Կրթահամակարգում համախառն ընդգրկվածության ցուցանիշ՝ տվյալ կրթահամակարգի դասարանների աշակերտների ընդհանուր թվաքանակի տոկոսային մասնաբաժինն է մշտական բնակչության նույն կրթահամակարգի համար պաշտոնապես սահմանված տարիքային խմբի թվաքանակի նկատմամբ:

⁹⁷ Երկրի բնութագիր (2010), կրթություն Հայաստանում, տես http://www.unicef.org/ceecis/Armenia_2010.pdf

⁹⁸ Հայաստանում երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2013, էջ 27:

հանգամանքը, որ քանի որ հանրակրթական դպրոցները ֆինանսավորվում են աշակերտների թվով, ապա հաճախ կոնկրետ դպրոցում հաշվառված երեխաների թիվը կարող է հաճախող երեխաների թվից ավելի լինել: Այս խնդիրը նաև առկա է ներառական և հատուկ դպրոցներում, հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար դպրոցը ստանում է 3-4 անգամ ավել ֆինանսավորում, քան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների համար:

Կրթության իրավունքը սահմանում է, որ բոլոր երեխաները պետք է հնարավորություն ունենան ստանալու պարտադիր անվճար, այլև որակյալ կրթություն՝ ուղղված անհատականության, ֆիզիկական և մտավոր ունակությունների զարգացմանը:

Իրավիճակի վերլուծության շրջանակներում իրականացված հարցազրույցները կրթության ոլորտի ներկայացուցիչների հետ ցույց տվեցին, որ այսօրվա հանրային կրթությունը ոչ թե երեխաների անհատական ունակությունների, այլ նրանց սերտելու հմտության զարգացման է ուղղված:

2005-2009 թվականների ՄԱԿ-ի «Հայաստան. Հազարամյակի զարգացման նպատակների առաջընթացի զեկույցում» նշվում է, որ երկրի հանրակրթության ոլորտում առկա են զգալի թերություններ: Աշակերտները դպրոց հաճախելու փոխարեն ստիպված են փնտրել մասնավոր ուսուցիչների ընդունելության չափանիշներին համապատասխանելու և կրթական հաջորդ փուլին անցնելու նպատակով («Կառավարություն և ՄԱԿ-ի հայաստանյան աշխատակազմ, 2010թ.):

Ինչպես նշված է 2012թ. իրականացված «Դպրոցական Կրթության հասանելիությունը» հաշվետվության մեջ, ՀՀ դպրոցական կրթության համակարգում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, որոնք ինչ-որ չափով վնաս հասցրեցին կրթական առօրյա գործառնություններին: «Կարելի է նշել բարեփոխումների երեք հիմնական ոլորտ՝ դպրոցական ուսումնառության տարիների երկարաձգում, գնահատման համակարգի փոփոխություն և առանձին ավագ դպրոցների ստեղծում»: Հին համակարգը ենթադրում էր դպրոցական ուսումնառության 10 տարի: 2001թ.-ին այն փոխվեց դառնալով 11 տարի, և 2006թ.-ին այն դարձավ 12 տարի: (ՀՀ Ազգային ժողով, 1999թ.): Ներկայիս ազգային համընդհանուր կրթության ուսումնական ծրագիրը տասներկուամյա հիմնական ծրագիր է, որը բաղկացած է պարտադիր տարրական (1-ից 4 դասարաններ), պարտադիր միջնակարգ (5-ից 9 դասարաններ), և բարձր միջնակարգ կամ ավագ դպրոց (10-ից 12 դասարաններ) կրթական փուլերից: Մասնագիտական և տեխնիկական-մասնագիտական դպրոցները հանդիսանում են ավագ դպրոցների այլընտրանք (UNESCO, 2011թ.): Մեկ այլ խոշոր փոփոխությունը դպրոցական կրթության ոլորտում անցումն է 5-ից 10-ը բալանոց գնահատման համակարգին, որն ուժի մեջ մտավ 2006թ.-ից, և որի նպատակն է բարելավել աշակերտների գնահատման արդյունքների ճշգրտությունն ու իսկությունը («Կառավարություն և ՄԱԿ-ի հայաստանյան աշխատակազմ, 2010թ.): Ըստ փորձագետների, գնահատման նոր համակարգը իսկապես հնարավորություն է տալիս առավել ճկուն և տարբերակված մոտեցում ցուցաբերել երեխաներին գնահատելիս, սակայն ուսուցման գործընթացի բարելավման և երեխաների անհատական ունակությունների զարգացման տեսանկյունից առավել հասցեական կարող է լինել ձևավորող գնահատումը, ինչը բացակայում է գնահատման համակարգից:

Ամենավերջին փոփոխությունը դպրոցական կրթական համակարգում ավագ դպրոցների ստեղծումն է որպես առանձին դպրոցներ, որոնք համախմբում են տարբեր դպրոցների աշակերտներին, ինչը խնդրահարույց է երեխաների ինտեգրման, նոր միջավայրին հարմարվելու տեսանկյունից:

Կրթության որակի վրա ազդող մեկ այլ կարևոր գործոն է դպրոցների նյութատեխնիկական ապահովվածությունը: Չնայած բազմաթիվ դպրոցների վերանորոգման ծրագրերին և դպրոցները արդիական սարքավորումներով ապահովելու ջանքերին, տարբեր դպրոցների ֆիզիկական պայմանները խնդրահարույց են: Գրեթե բոլոր դպրոցներում անվանապես առկա համակարգիչները գտնվում են փակված սենյակներում, իսկ աշակերտները պարզապես

չեն խրախուսվում դրանք օգտագործելու համար: Լաբորատորիաներում սարքավորումների պակասը խոչընդոտում է դասավանդվող առարկան պատշաճ հասկանալուն⁹⁹:

Առավել խոցելի են այս առումով ներառական դպրոցները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց (ԿԱՊԿՈՒ) կրթության մասին օրենքը բավականին անորոշ ձևակերպում է տալիս ՆԴ-ների ֆիզիկական հարմարեցվածության չափանիշներին: Խոսքը անհրաժեշտ տարածքների, ենթակառուցվածքների մասին է, որոնց բովանդակային կողմը չի նշվում: Ներառական կրթության արդյունավետության գնահատմանն ուղղված հետազոտության շրջանակներում ընտրանքային 34 ՆԴ ֆիզիկական հարմարեցվածության գնահատման արդյունքները ցույց են տվել, որ ֆիզիկական պայմանների տեսանկյունից ուսումնասիրված 34 ՆԴ-ներին կարելի է դասել խիստ թերհագեցվածների շարքին¹⁰⁰: ՆԴ-ները ապահովված են միայն մուտքում թեքահարթակով և ճաշարանով, իսկ հարմարեցված դասարանները, սանհանգույցները, սպորտդահլիճները բացակայում են առհասարակ:

Դպրոցական կրթության մեկ այլ կարևոր բաղադրիչ՝ դասագրքերը, ևս հաճախ հանդիսանում են կրթության որակի վրա ազդող կարևորագույն գործոն: Ինչպես նախկին հետազոտությունները, այնպես էլ ուղրտի ներկայացուցիչները փաստում են դասագրքերի ծանրաբեռնվածության, հակասական տեղեկատվություն պարունակելու մասին¹⁰¹:

Երեխաների կրթության իրավունքն ապահովող կարևորագույն ռեսուրս են ուսուցիչները: Ըստ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների՝ ուսուցիչ-աշակերտ միջին հարաբերակցությունը 1-ին 11 է¹⁰², սակայն պետք է անդրադառնալ ուսուցչական կազմի որակին և որակի ապահովմանը: Չնայած որ ներդրվել է ուսուցիչների ատեստավորման համակարգը, այնուամենայնիվ այդ համակարգը հնարավորություն չի տալիս վատ արդյունքներ ունեցող ուսուցիչներին բացահայտելու և նրանց աշխատանքից հեռացնելու: Իրականում ատեստավորումը՝ վերապատրաստմանը ուսուցչի մասնակցությունը և տեսական գիտելիքների առկայությունը հավաստող վկայական է: Դա ուսուցչի՝ դասարանում նոր մեթոդներով աշխատելու կարողությունը հավաստող փաստաթուղթ չէ:

Վերապատրաստումները դեռևս ուսուցիչների մասնագիտական զարգացման միակ ձևն են: Անցկացվել են ուսուցիչների բազմաթիվ վերապատրաստման ծրագրեր՝ առարկայական չափորոշիչների, ուսուցման նոր մեթոդների, գնահատման, տեղեկատվական տեխնոլոգիաների գծով, մարդու իրավունքների, երեխայի իրավունքների վերաբերյալ: Սակայն այդ վերապատրաստումներից հետո ուսուցիչները բավարար աջակցություն չեն ստանում նոր գիտելիքներն ու հմտությունները դասապրոցեսում կիրառելու նպատակով: Հետազոտությանը մասնակցած ուսուցիչների 37%-ը համարում է, որ իրենց անհրաժեշտ են վերապատրաստումներ՝ աշակերտների հետ հաղորդակցվելու հմտությունների զարգացման ուղղությամբ¹⁰³:

Ներառական դպրոցներում կարևոր խնդիր է համարվում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ անմիջականորեն աշխատող բազմամասնագիտական թիմի անդամների մասնագիտական պատրաստվածությունը: Դպրոցի ներառական կարգավիճակ ստանալուն հաջորդում են ուսուցիչների, բազմամասնագիտական թիմի անդամների վերապատրաստումները: Գոյություն չունի ընդհանուր մոտեցում բազմամասնագիտական թիմի պարտադիր կազմի և անդամների գործառնությունների վերաբերյալ: Մասնագետի աշխատանքի նկարագրությունը կամ առնվազն պարտականությունների սահմանը չի նկարագրվում: Նման կարգավորումների բացակայու-

⁹⁹ «Դպրոցական կրթության հասանելիություն» հետազոտական ուսումնասիրություն, Թրփանճեանի անվան հասարակական հետազոտությունների կենտրոն, Հայաստանի ամերիկյան համալսարան, 2012, էջ 55:

¹⁰⁰ Ներառական կրթության արդյունավետության գնահատում, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, Երևան, 2013, էջ 8:

¹⁰¹ Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը Հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում, «Բարև» ՀԿ, Երևան, 2013, էջ 7:

¹⁰² ԱՎԾ, ՀՀ սոցիալական վիճակը 2013թ.-ին:

¹⁰³ Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը Հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում, «Բարև» ՀԿ, Երևան, 2013, էջ 6:

թյան արդյունքում, թե՛ բազմամասնագիտական թիմի կազմը, թե՛ պարտավորությունների ընկալումը տարբերվում է ոչ միայն մարզից մարզ, այլև դպրոցից՝ դպրոց¹⁰⁴:

Կրթության իրավունքի իրացման վրա ազդող գործոն է նաև դպրոցի կառավարումը, որն այժմ իրականացվում է կոլեգիալ մարմնի՝ դպրոցի կառավարման խորհրդի կողմից: Սակայն հաճախ այդ խորհուրդների գործունեությունը կրում է ձևական բնույթ, մասնակիցների ընտրությունը իրականացնում է դպրոցի տնօրենը՝ չպահպանելով թափանցիկության սկզբունքը: Ձևական բնույթ են կրում նաև աշակերտական խորհուրդները, որոնց գործունեությունը սահմանափակվում է արտաուսումնական միջոցառումներ կազմակերպելով միայն: Աշակերտները ոչ միշտ են տեղյակ աշակերտական խորհուրդների գործառույթների՝ իրական շրջանակի մասին, հաճախ ուսուցիչները միջամտում են աշակերտական խորհուրդների գործունեությանը՝ առաջադրելով խորհրդի նախագահ, որոշելով գործունեության ուղղությունները: Աշակերտական ինքնակառավարման մարմիններում աշակերտների ներգրավումն ուղղված է աշակերտների քաղաքացիական կրթությանը և մասնակցությանը դպրոցի կյանքում՝ նրանց մոտ քաղաքացիական արժեքների, հմտությունների ձևավորմանը, սակայն իրականում քաղաքացիական կրթությունը աշակերտները չեն ստանում պայմանավորված վերոնշյալ հանգամանքներով, բացի այդ ոչ միշտ են համապատասխան ուսուցիչներ դասավանդում հասարակագիտական առարկաները: Քաղաքացիական կրթություն երեխաները հնարավորություն ունեն ստանալու նաև այլ առարկաների շրջանակներում դասավանդման մեթոդների կիրառման միջոցով՝ խմբային աշխատանք, բանավեճեր, քննադատական մոտեցում: Սակայն ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, հաճախ հանրակրթական դպրոցներում ինտերակտիվ մոտեցումների կիրառումը կրում է ինքնանպատակ, ձևական բնույթ և խիստ պայմանավորված է ուսուցչի հանգամանքով՝ որոշ ուսուցիչներ են միայն գրագետորեն կիրառում դասադրոցների խնդիրներին համապատասխան մեթոդներ, մեծամասամբ ուսուցիչները կիրառում են ավանդական մեթոդներ՝ սահմանափակելով դասարանի բոլոր երեխաների հավասար ներգրավումը դասադրոցներին, ինչպես նաև դասը կառուցելով դասարանի բարձր առաջադիմություն ունեցող մեկ-երկու աշակերտների շուրջ:

Քաղաքացիական կրթությանն ուղղված ծրագրեր իրականացվում են տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների կողմից՝ ՍԻՎԻՏԱՍ, «Սեյվ դը չիլդրեն», «Վորլդ Վիժն»: ՍԻՎԻՏԱՍ կազմակերպության կողմից 2008-2014թթ.-ին վերապատրաստվել են 1000 հասարակագիտության ուսուցիչներ, որոնցից յուրաքանչյուրը շուրջ 15 աշակերտների հետ իրականացրել է ՔԱՂԱՔԱՑԻ նախագիծը՝ հատուկ մեթոդաբանություն ուղղված երեխայի մոտ քաղաքացիական արժեքների, գիտելիքների, հմտությունների ձևավորմանը:

Կրթության իրավունքի մեկ այլ բաղադրիչ է աղետների ռիսկերի նվազեցման (ԱՌՆ) կրթության իրականացումը Հայաստանում, որին ներգրավված են հասարակական և միջազգային կազմակերպություններ: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը և «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունները իրականացնում են ծրագրեր հանրակրթական և հատուկ դպրոցներում ուղղված ԱՌՆ կրթությանն ու պատրաստվածությանը: Ինչպես նշված է «Աղետների ռիսկերի նվազեցման կրթության իրականացումը Հայաստանում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքների և իրավունքների տեսանկյունից» գրքում, հանրակրթության բովանդակությունը սահմանող փաստաթղթերում՝ չափորոշիչներում և ծրագրերում բավարար չափով և ուղղակիորեն չեն արտացոլվում ԱՌՆ կրթության հարցերը, մասնավորապես չկա միասնական հայեցակարգ և մեթոդաբանություն¹⁰⁵:

Մշակվել են ձեռնարկներ ուսուցիչների համար ԱՌՆ կրթության վերաբերյալ¹⁰⁶:

¹⁰⁴ Ներառական կրթության արդյունավետության գնահատում, Երևան, 2013, էջ 9:

¹⁰⁵ Աղետների ռիսկերի նվազեցման կրթության իրականացումը Հայաստանում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքների և իրավունքների տեսանկյունից, Երևան, 2013, էջ 34:

¹⁰⁶ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, հանրակրթություն, աղետների ռիսկի նվազեցման կրթություն, <http://www.edu.am/index.php?menu1=9&menu2=528&arch=0>

3.3.3 Խոցելի խմբերի երեխաների կրթությունը

Երեխաների կրթության իրավունքը սահմանում է կրթություն ստանալու հավասար հնարավորություններ բոլոր երեխաների համար: Անդրադառնանք խոցելի որոշ խմբերի և հասկանանք, որքանով է նրանց կրթության իրավունքը իրացվում Հայաստանում:

Հաշմանդամություն ունեցող երեխաներ

Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքը սահմանվում է ՀՀ «Կրթության մասին» և «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց մասին» օրենքներով, ինչպես նաև համընդհանուր ներառման գաղափարախոսությամբ, ըստ որի մինչև 2022թ.-ին բոլոր դպրոցները պետք է դառնան ներառական: Այժմ Հայաստանում գործում է 139 ներառական դպրոց՝ ապահովելով ՀՀ բոլոր մարզերը, սակայն ոչ հավասարաչափ բաշխմամբ: Նույնիսկ հաշվի առնելով ՀՀ մարզերի ոչ հավասարաչափ բաշխումն ըստ բնակչության, ամեն դեպքում անհավասարաչափ են ներառական դպրոցների բաշխումն ըստ մարզերի՝ Արագածոտն, Արարատ, Արմավիր մարզերում առկա են երեքական ներառական դպրոց: Համաձայն երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. ռազմավարության՝ 2012թ.-ին ՀՀ ներառական դպրոցներում սովորել է 2000 ԿԱՊԿՈՒ երեխա, չնայած որ ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկվածության վերաբերյալ տվյալներն ամբողջական չեն: Քանի որ ԿԱՊԿՈՒ երեխաների բացահայտման համակարգը և ներառական կրթությունը դեռևս համատարած ներդրված չեն, հնարավոր չէ միարժեքորեն ասել թե այդ երեխաների որ մասն է կրթությունից դուրս մնում: Բացի այդ, համայնքներում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները ի պաշտոնե պետք է հայտնաբերեն ԿԱՊԿՈՒ երեխաներին և ապահովեն նրանց կրթությունը, իրականացնեն մշտադիտարկում: Սակայն այս ինստիտուտը հասարակական հիմունքների վրա հիմնված լինելու հետևանքով, ոչ միշտ է կատարում իր ողջ գործառնությունը:

Բացի ԿԱՊԿՈՒ երեխաների հաճախումը, գոյություն ունեն նաև այլ խնդիրներ նրանց իրավունքների իրացման ճանապարհին: Ուսուցիչների մի մասը ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ կանխակալ և կարծրատիպային վերաբերմունք ունեն: Որոշ դեպքերում առարկայական ուսուցիչները ԿԱՊԿՈՒ երեխաներին ընկալում են որպես անընդունակ, հիվանդ երեխաների, որոնց հետ անիմաստ է ժամանակ ծախսել, քանի որ ոչ մի լուրջ գիտելիք չեն կարող ընկալել¹⁰⁷:

Հաշմանդամություն ունեցող երեխաները կրթությունը շարունակում են ստանալ նաև հատուկ դպրոցներում. թվով 23 պետական հատուկ դպրոց է գործում: Չնայած պետական ծրագրերը հռչակում են հատուկ դպրոցների բեռնաթափման, նրանցում աշակերտների քանակի նվազման մասին, այնուամենայնիվ դրանք դեռ շարունակում են գործել: Մի շարք հետազոտություններ վկայակոչում են այնտեղ երեխաների իրավունքների ոտնահարումը՝ բռնության դեպքերը երեխաների նկատմամբ, անհատական ունակությունների զարգացմանն ուղղված ոչ պրոֆեսիոնալ մոտեցումը, մեկուսացումը հասարակությունից:

Հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր 3 երեխայից 1-ն է հաճախում կամ հաճախել մանկապարտեզ: Գյուղական համայնքներում այս ցուցանիշը (23%) գրեթե կրկնակի ցածր է քաղաքների համեմատությամբ (44%): Հաստատություններում գտնվող հաշմանդամություն ունեցող երեխաները կրկնակի խոցելի վիճակում են գտնվում, ինչի մասին են փաստում հետազոտությունները՝ «Մանկատներում բնակվող հաշմանդամություն ունեցող երեխաները գրեթե դուրս են մնում ընդհանուր հիմնական կրթությունից: Յուրաքանչյուր 20 երեխայից միայն 1-ն է հաճախում ընդհանուր հանրակրթական դպրոց (5%), 5-ը հաճախում են հատուկ դպրոցներ (23%), իսկ 14-ը բացարձակապես դպրոց չեն հաճախում (72%)»¹⁰⁸:

¹⁰⁷ Ներառական կրթության արդյունավետության գնահատում, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2012:

¹⁰⁸ Խոսքը ներառման մասին է, UNICEF, էջ 15:

Սոցիալապես անապահով (աղքատ) երեխաներ

Սոցիալապես անապահով երեխաները խոցելի են կրթության հասանելիության տեսանկյունից՝ դպրոցից դուրս մնացած երեխաների ցուցանիշը հասնում է 35 %-ի¹⁰⁹:

Դպրոցահասակ երեխաների հետ անցկացված հարցումների արդյունքները վկայում են այն մասին, որ աղքատության և դպրոցում առաջադիմության միջև որոշակի կապ գոյություն ունի: Ցածր միջին գնահատական ունեցող աշակերտները տանը չեն կենտրոնանում իրենց դասերի վրա և ավելի պակաս ժամանակ են ունենում տնային աշխատանքների վրա ծախսելու համար¹¹⁰:


Հաստատություններում գտնվող երեխաներ (գիշերօթիկ դպրոցներ, խնամքի և դաստիարակության գիշերօթիկ հաստատություններ, մանկատներ, հատուկ դպրոցներ)

2014թ. դրությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ գործող երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում գտնվում է 1481 երեխա, որից դպրոցահասակ երեխաները՝ 74% են կազմում, իսկ նախադպրոցական տարիքի երեխաները՝ 14%: Դպրոցահասակ երեխաների միայն 77%-ն է ստանում կրթություն հանրակրթական ծրագրերով, որից 76%-ը հաճախում է ընդհանուր հանրակրթական դպրոց, իսկ 19%-ը՝ հատուկ հանրակրթական դպրոց:

Նախադպրոցական տարիքի երեխաները կրթություն ստանում են հաստատություններում, սակայն ոչ միշտ է նրանց ցուցաբերվում որակյալ կրթություն:

Էթնիկ փոքրամասնություններ

Ըստ 2011թ.-ի մարդահամարի տվյալների՝ Հայաստանում մինչև 19 տարեկան 16480 ազգային փոքրամասնության ներկայացուցիչ կա, ինչը ներկայացված է ստորև՝ Սանդղակ 1-ում:



Սանդղակ 1. 0-19 տարեկան էթնիկ փոքրամասնությունների բաշխումը

Վիճակագրական շատ քիչ տեղեկություններ են հասանելի դպրոց չհաճախող երեխաների մասին: Հատկապես դժվար է ստանալ տվյալներ բաղդատված ըստ տարիքի, սեռի, բնակության վայրի, էթնիկ ծագման, կրոնական պատկանելիության եւ սոցիալ-տնտեսական իրավիճակի: ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողովը Հայաստանի երրորդ եւ չորրորդ համակցված պարբերական զեկույցի նախապատրաստման համար ենթակա խնդիրների ցանկում (2012թ.), ՀՀ Կառավարությունից պահանջել է նման մանրամասն տվյալներ¹¹¹: Սակայն, ամենայն հավանականությամբ, նման տվյալներ ուղղակի գոյություն չունեն: Միաժամանակ և՛

¹⁰⁹ Հայաստանում Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2013:

¹¹⁰ «Դպրոցական կրթության հասանելիություն» հետազոտական ուսումնասիրություն, Թրփանճեանի անվան հասարակական հետազոտությունների կենտրոն, Հայաստանի ամերիկյան համալսարան, 2012, էջ 43:

¹¹¹ CRC/C/ARM/Q/3-4, էջ 3:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԵԱՀԿ) և ՄԱԿ-ի երեխաների իրավունքների հանձնաժողովը Հայաստանին վերաբերող իրենց նորացված փաստաթղթերում նշում են, որ դպրոց չհաճախող երեխաների թիվը բավականին մեծ է:

Օրենքի հետ առնչություն ունեցող երեխաներ¹¹²

ՀՀ օրենսդրությունը չունի հստակ քաղաքականություն, զարգացման ամրագրված ուղղություններ անչափահաս իրավախախտ անձնանց ուղղման ու վերականգնման վերաբերյալ՝ որպես ինստիտուցիոնալ մոտեցում: Հատկապես հատկանշական է անչափահաս իրավախախտների կրթության ուղղությամբ իրավական կարգավորումների բացակայությունը և թերությունները: Որևէ իրավական ակտով չեն նախատեսվում կոնկրետ մեխանիզմներ ու քայլեր անչափահաս կալանավորվածների և դատապարտյալների կրթության կամ մասնագիտական կրթության կազմակերպման ուղղությամբ:

Անչափահաս դատապարտյալները գտնվում են Արմավյան քրեակատարողական հիմնարկում, որտեղ օրենքով սահմանված կարգով անչափահասները ստանում են պարտադիր հանրակրթական կրթություն և նախնական մասնագիտական կրթություն (հյուանություն, գյուղմեխանիկա, էլեկտրասարքավորումների մասնագետ): Ընդ որում անչափահասների քանակի և ռեսուրսների սակավության պատճառով պարտադիր կրթությունը ստանում են կոմպլեկտավորված դասարաններում՝ մի քանի դասարանի անչափահաս դատապարտյալներ սովորում են միևնույն դասարանում: Ինչպես փաստում են հետազոտության արդյունքները, հիմնարկի տնօրինությունը դատապարտյալին այս կամ այն դասարան հրամանագրում է ըստ դատապարտյալի հայտարարության, թե որ դասարանում է սովորել մինչ ազատագրվելը: Չեն գնահատվում դատապարտյալի կրթության կարիքները, հաշվի չի առնվում նրա նախկին առաջադիմությունը: Բացի այդ, մասնակցությունը դասապրոցեսին կրում է ձևական բնույթ՝ ներկա ստանալու համար¹¹³:

3.3.4 Երեխաների մասնակցությունը մշակութային կյանքին

ՀՀ մշակույթի նախարարությունը երեխաների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության թնագավառում միասնական քաղաքականություն իրականացնելու նպատակով մշակել և ՀՀ Կառավարության հաստատմանն է ներկայացրել գեղարվեստական կրթության հայեցակարգը:

Համաձայն ՀՀ օրենսդրության՝ արտադպրոցական դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է և նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը: Արտադպրոցական դաստիարակություն իրականացվում է մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցների, ակումբների, պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների և տուրիստական կայանների, մարզադպրոցների, առողջարարական ճամբարների և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպությունների միջոցով:

Համաձայն վիճակագրական ծառայության տվյալների՝ 2013-2014 ուսումնական տարում հանրապետությունում գործել են երաժշտական, արվեստի, գեղարվեստի և մանկապատանեկան ստեղծագործական 226 դպրոց և կենտրոն՝ ընդգրկելով բոլոր մարզերը, սակայն ոչ հավասարապես:

¹¹² Օրենքի հետ գործ ունեցող երեխաները, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ:

¹¹³ Անչափահաս ազատագրվածների կրթությունը և մասնագիտական ուսուցումը, «Սոցիալական արդարություն» ՀԿ, 2015:

2013-2014 ուսումնական տարում երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում սովորել է 47822 աշակերտ (65.6%-ը՝ աղջիկ), որոնց 70.3%-ը՝ վճարովի (73.3%-ը՝ աղջիկ): Այս առումով պետք է նկատել, որ տղա երեխաների մասնակցությունն առավել ցածր է:

2013/2014 ուսումնական տարում փառատոնների և մրցույթների մասնակցել է 1919 երեխա, որից շուրջ 70%-ը՝ աղջիկ:

Հիմնադրվել են դպրոցական ֆիլիարմոնիա, տիկնիկային թատրոններ, սակայն երեխաների ներգրավումը դրանցում իրական և խորը ուսումնասիրության կարիք ունի:

Հայաստանում գոյություն ունեն պետական և ոչ պետական բազմաթիվ արտադպրոցական ուսումնական հաստատություններ: Ընդ որում ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործում են 8 պետական արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություններ, որոնց աշխարհագրական տարածումը բավականին սահմանափակ է՝ Երևան, Տավուշ: Գումարային հաշվով այդ հաստատություններում ուսանում է մոտ 4500 սան՝ ըստ պաշտոնական տվյալների¹¹⁴:

Գեղարվեստական կրթության մատչելիության ապահովման նպատակով ՀՀ Կառավարության 2007թ.-ի հոկտեմբերի 11-ի N 1167-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման ծրագիրը: Ուսման վարձավճարների փոխհատուցում ՀՀ 2009-2011թթ.-ին ստացել են 144 դպրոցների 2443 սովորողներ:

Արտաուսումնական ծրագրեր իրականացվում են հասարակական և միջազգային կազմակերպությունների կողմից, սակայն դրանց մասին հավաստի վիճակագրական տվյալները բացակայում են, մասնավորապես՝ հաճախող երեխաների սեռատարիքային, մարզային բաշխումը:

Երեխաների ժամանցի, մշակութային կյանքին մասնակցելու ոչ պետական կենտրոններում ներգրավման մասին ևս հավաստի տվյալներ չկան:

Ինչպես ներկայացված է այլընտրանքային զեկույցում երեխաների գեղարվեստական կրթության բնագավառում վերջին տարիներին զգալի դրական տեղաշարժեր են գրանցվել: Նախ բարձրացել է համայնքների կողմից երիտասարդների ու երեխաների շրջանում մշակույթի, արվեստի, սպորտի զարգացման համար միջոցների հատկացման կարևորության գիտակցումը, ավելացել են նաև գեղարվեստական կրթության զարգացմանը, երիտասարդական հաղորդաշարերի և մրցույթների, միջոցառումների կազմակերպմանն ուղղված պետական ծրագրերը: Սակայն դեռևս կան խնդիրներ: Ընդհանուր առմամբ, դպրոցներում և համայնքներում գրադարանները գտնվում են անմխիթար վիճակում, առկա գրականությունը հիմնականում ունի 20-30 տարվա վաղեմություն: Դպրոցներում մինիմալ ֆիզիկական պայմաններն ապահովված են միջոցառումներ կազմակերպելու համար՝ բեմ, մարզադահլիճներ: Սակայն դրանք ամենամյա կրկնվող միջոցառումներ են, որոնք չեն բավարարում երեխաների հետաքրքրությունները¹¹⁵:

3.3.5 Երեխաների՝ նախնական և միջին մասնագիտական կրթություն ստանալու իրավունքը

2013-2014 ուսումնական տարում հանրապետությունում գործել են նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագիր իրականացնող 45 պետական ուսումնական հաստատություններ, որոնցից 25-ը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և 20-ը՝ միջին մասնագիտական: Ուսումնառություն իրականացվել է հիմնական և միջնակարգ կր-

¹¹⁴ ՀՀ կրթության եվ գիտության նախարարության ենթակայությամբ գործող պետական արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություններ, տես <http://www.edu.am/DownloadFile/6102arm-CANK.pdf>

¹¹⁵ Այլընտրանքային զեկույց:

թության հիմքի վրա: Ուսանողների թվաքանակը կազմել է 7448, որոնց 24.1%-ը աղջիկներ են: Անվճար ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 95.6%-ը, իսկ վճարովի՝ 4.4%-ը: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 7.2% (կանանց՝ 3.7%, տղամարդկանց՝ 10.3%), գենդերային հավասարության ցուցանիշը (տղաների համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ աղջիկների համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 0.36:

Նախնական մասնագիտական ծրագրեր իրականացնող 28 ուսումնական հաստատություններ կան բոլոր մարզերում, բացառությամբ Վայոց Ձորի և Արարատի:

Ըստ վիճակագրական տվյալների նախնական ուսումնական հաստատություններում սովորողների թիվն աճման միտում ունի: Ոլորտի մասնագետները սա կապում են կրթության ոլորտում ընթացող մի շարք բարեփոխումների հետ՝ 12-ամյա կրթական համակարգ, պարտադիր տարկետման իրավունքի բացակայություն, նախնական մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող միջազգային ծրագրեր:

2013-2014 ուսումնական տարում նախնական մասնագիտական ծրագրով սովորել են 6193 երեխա (մինչև 18 տարեկան սովորողների թիվն է ըստ վիճակագրական ծառայության), որից շուրջ 90%-ը սովորել է անվճար հիմունքներով:

Հանրապետության 99 միջին մասնագիտական պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում (ՄՄՈՒՀ) 2013-2014 ուսումնական տարում ընդունվել է 9785 (աղջիկներ՝ 54.4%), սովորել՝ 30125 (աղջիկներ՝ 53.3%), ավարտել՝ 7019 (աղջիկներ՝ 58.9%) մարդ: Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 12.2% (աղջիկներ՝ 13.4%, տղաներ՝ 11.1%), գենդերային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 1.21:

2013-2014 ուսումնական տարում հանրապետությունում գործել է 82 միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություն: Ուսանողների թվաքանակը կազմել է 28333 (մինչև 18 տարեկան սովորողների թիվը կազմել է 22259), որոնց 52.4%-ը աղջիկներ են: Վճարովի ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 60.5%-ը, իսկ անվճարում՝ 39.5%-ը:

Առաջարկություններ

Հիմնվելով վերլուծության մեջ ներկայացված տվյալների վրա՝ ներկայացնում ենք կրթական համակարգում երեխաների իրավունքների իրացման բարելավմանն ուղղված հետևյալ առաջարկությունները.

- հասանելի դարձնել նախադպրոցական կրթության կենտրոնները բոլոր համայնքներում և բոլոր երեխաների համար, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող
- կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման համար մշակել հաշվառման, մոնիթորինգի համակարգ, այդ թվում տարբեր խոցելի խմբերի երեխաների համար, այդ թվում հաշմանդամություն ունեցող, սոցիալապես անապահով և այլն
- բարելավել կրթական ծառայությունների որակը փակ հաստատություններում՝ քրեակատարողական հիմնարկ, հատուկ դպրոցներ
- ներդնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքների և առաջադիմության գնահատման ճկուն մեխանիզմներ
- դպրոցներում ներդնել տարբերակված մշակութային խմբակներ
- զարգացնել աշակերտական խորհուրդների աշխատանքներում ներգրավված երեխաների հմտությունները՝ ուղղված աշակերտական ինքնակառավարման մարմինների, մասնակցության գործընթացների կազմակերպմանը
- ներդնել ուսուցիչների աջակցության առավել հասցեական և օպերատիվ համակարգ
- կրթության բովանդակության բարելավման աշխատանքներում ներգրավել աշակերտների:

3.4 ԵՐԵՒԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.4.1 Վերարտադրողական առողջության մարչելիություն և որակ

Որպես ԱՀԿ/Եվրոպայի գործընկեր պետություն՝ Հայաստանը ԱՀԿ-ի վերահսկողությամբ պարտավորվել է կրճատել երեխայի առողջությանը սպառնացող վտանգները, ինչպես նաև հասնել ՄԱԿ-ի հազարամյակի զարգացման նպատակներին, մասնավորապես՝ 4-րդ և 5-րդ նպատակներին, որոնք վերաբերում են մանկական մահացության կրճատմանը և մայրական առողջության բարելավմանը:

Հայաստանում վերարտադրողական տարիքի (15-49 տարեկան) կանանց թիվը մոտավորապես 1.32 միլիոն է¹¹⁶:

Օրենդրության մակարդակում վերարտադրողական առողջությունն ապահովվում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով (ընդունված 04.03.1996թ.-ին) և «Վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքով (ընդունված 11.12.2002թ.-ին), ինչպես նաև կառավարության որոշումներով և ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ ԱՆ) կողմից մշակված չափորոշիչներով (տես հավելվածը): Ծառայությունների մակարդակում Հայաստանում վերարտադրողական առողջության պահպանումը և մայրական խնամքն իրականացվում է մանկաբարձ-բուժակների կետերի, ամբուլատոր պոլիկլինիկաների և հիվանդանոցների միջոցով: Վերարտադրողական առողջության ոլորտում առողջության առաջնային պահպանման ծառայությունները մատուցվում են կանանց կոնսուլտացիայի կլինիկաների և գյուղական առողջապահական հաստատությունների միջոցով: Ծառայությունների հիմնական փաթեթը (ԾՀՓ) ներառում է վերարտադրողական առողջության բնագավառում սահմանափակ ծառայություններ, ինչպիսիք են առաջին մակարդակի այցելությունները գինեկոլոգին, տարին մեկ անգամ ստուգում՝ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների (ՍՓՀ) հայտնաբերման նպատակով, հղիությանը նախորդող իմունիզացիա բոլոր կանանց համար և ծառայությունների ավելի լայն սպեկտր որոշակի խոցելի խմբերի համար: ԾՀՓ-ն չի ներառում այն ծախսերը, որոնք պահանջվում են հետագա զննման, հետազոտման, լաբորատոր քննությունների կամ բուժման և անհրաժեշտ դեղորայքի համար:

Նախաձննդյան խնամքը ներառված է ԾՀՓ-ում և գործում է Հայաստանում ապրող բոլոր կանանց համար: 2010թ.-ին անցկացված Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտությունը (ՀԺԱՀ) ցույց է տալիս, որ հայ կանանց 99%-ն օգտվել է նախաձննդյան խնամքի ծառայություններից: Նրանց մեծ մասը (93%) հայտնել են, որ վերջին 5 տարիների ընթացքում կատարել են չորս կամ ավելի նախաձննդյան այցելություններ: Հիմնվելով 2010թ.-ի ՀԺԱՀ-ի տվյալների վրա՝ կանանց 74%-ը չի վճարել նախաձննդյան ծառայությունների համար, իսկ 53% տոկոսը դեղերը ստացել է անվճար: Նախաձննդյան ծառայությունների մատչելիությունը հաշմանդամ կանանց համար դեռևս չլուծված հարց է Հայաստանում, քանի որ առողջապահական հաստատությունների մեծ մասը չունի համապատասխան հարմարություններ և ֆիզիկապես մատչելի չէ անվասայլակից օգտվողների համար: Տեսողական և լսողական խնդիրներ ունեցող անձինք ևս պատշաճ խնամք ստանալու ճանապարհին հանդիպում են տարբեր խոչընդոտների:

ՀՀ ԱՆ-ի տվյալները ցույց են տալիս, որ 2010թ.-ին մայրական մահացության դեպքերի թիվը կազմել է 0.12՝ 100,000 կենդանածինների հաշվով, սակայն այն աճել է վերջին երեք տարիների ընթացքում՝ 2013թ. հասնելով 0.30-ի¹¹⁷: Տնային պայմաններում ծննդաբերություն-

¹¹⁶ Հայաստանի ժողովրդագրության և առողջության վերաբերյալ հետազոտություն, 2010:

¹¹⁷ Առողջապահության ազգային ինստիտուտի և ՀՀ ԱՆ-ի վիճակագրական տարեգիրք, 2014:

ների թիվը 2000թ.-ի 9%-ից հասել է 2%-ի 2005թ.-ին, իսկ 2010թ.-ին իջել է 1%-ից¹¹⁸: ԱՆ վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2007թ.-ին կենդանածինների թիվը կազմել է 40055, իսկ 2008թ.-ին՝ 41258, 2009թ.-ին՝ 44306, 2010թ.-ին՝ 44330, իսկ 2013թ.-ին՝ 41668: 2008-2010թթ.-ի ընթացքում թվի աննշան աճը կարող է պայմանավորված լինել ծննդոգնության վկայագրի ներդրմամբ, սակայն սա չպետք է դիտարկել որպես միակ բացատրություն:

Վերարտադրողական առողջությունը նաև վերաբերում է ընտանիքի պլանավորման և հղիության արհեստական ընդհատման հարցերին: 2002թ.-ին Հայաստանի խորհրդարանի կողմից ընդունված վերարտադրողական առողջության և իրավունքների մասին օրենսդրության համաձայն՝ հակաբեղմնավորիչ միջոցների օգտագործումը, այդ թվում՝ կամավոր ամլացումն օրինական է Հայաստանում: Հղիության արհեստական ընդհատումը ևս օրինական է, եթե այն տեղի է ունենում հղիության 12-րդ շաբաթից առաջ: Կանանց կեսից ավելին որևէ հակաբեղմնավորիչ չի օգտագործում, իսկ որոշ շրջաններում հակաբեղմնավորիչ չօգտագործողների թիվը հասնում է 73%-ի¹¹⁹: Վերարտադրողական տարիքի 1000 կնոջ հաշվով գրանցված հղիության արհեստական ընդհատումների թիվը 2013թ.-ին 15.9 էր, ինչը շատ մոտ է վերջին 5 տարիների ընթացքում գրանցված թվին¹²⁰: Արհեստական ընդհատումներով ավարտվող հղիությունների թիվը վերջին տասը տարիների ընթացքում կրճատվել է՝ 50%-ից հասնելով 45%-ի (2000-2005թթ.), իսկ 2010թ.-ին 29%-ի: 2010թ.-ին ՀԺԱՀ-ը ցույց է տալիս, որ հղիությունն արհեստականորեն ընդհատող կանանց 39%-ը որպես պատճառ նշել է, որ այլևս չի ցանկանում երեխա ունենալ: Սեռով պայմանավորված ընդհատումների թիվը նշվել է դեպքերի 9%-ում, հաճախ այն պատճառով, որ ցանկալի սեռը եղել է արականը (8%)¹²¹: Ըստ ժողովրդագրական վիճակագրության՝ սկսած 1990թ.-ից նորածինների շրջանում արական-իգական համամասնությունը փոխվել է դեպի արականի գերակայությունը: 2012թ.-ին նորածինների սեռերի հարաբերակցությունը կազմում է 114 նորածին տղա՝ 100 նորածին աղջկա հաշվով, եթե երեխան երկրորդն է ընտանիքում, մինչդեռ բնական համամասնությունն է 102-106՝ արականը՝ 100 իգականի հաշվով:

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում առաջարկվող փոփոխության ընդունման դեպքում երեխայի սեռը չի բացահայտվելու նախքան հղիության 30-րդ շաբաթը: 2013թ.-ից սկսած ԱՆ-ն միջազգային կազմակերպությունների աջակցությամբ մշակում է հանրային իրազեկման քարոզարշավներ, որոնք համարվում են ավելի արդյունավետ, քան օրենսդրական սահմանափակումները:

Առաջարկություններ

- Շարունակել ջանքեր ներդնել գյուղական համայնքներում մանկաբարձական խնամքի բարելավման, հատկապես՝ նորածինների ինտենսիվ խնամքի և վերակենդնացման ծառայությունների հզորացման ուղղությամբ:
- Շարունակական վերապատրաստում անցկացնել ծննդատներում նորածնային խնամքի, թերհաս նորածինների խնամքի, մոր և մանկան առողջության կանխարգելիչ և լուսավորչական միջոցառումների, ինչպես նաև պատշաճ խորհրդատվություն տալու ոլորտում ամբուլատորիաների անձնակազմերի հետ, հատկապես՝ գյուղական վայրերում:
- Հետամուտ լինել նախաձեռնության, ծննդոգնության և հետծննդաբերական խնամքի ոլորտում անօրինական վճարների և կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերմանը:
- Ապահովել առողջապահական բոլոր ծառայությունների հավասար մատչելիությունը, մասնավորապես՝ հղիության և ծննդաբերության ընթացքում հաշմանդամ կանանց համար առողջապահական ծառայությունների հավասար մատչելիությունը:
- Հաշվի առնելով թերհաս և թերքաշ նորածինների մեծ թիվը՝ ավելի մեծ ուշադրություն

¹¹⁸ Հայաստանի ժողովրդագրության և առողջության վերաբերյալ հետազոտություն, 2010:

¹¹⁹ Հայաստանի ժողովրդագրության և առողջության վերաբերյալ հետազոտություն, 2010:

¹²⁰ Առողջապահության ազգային ինստիտուտի և ՀՀ ԱՆ-ի վիճակագրական տարեգիրք, Առողջություն և հանրային առողջություն, 2014:

¹²¹ Հայաստանի ժողովրդագրության և առողջության վերաբերյալ հետազոտություն, 2010:

պետք է դարձնել մայրական առողջության վրա, հատկապես բեղմնավորումից առաջ խնամքի ծառայություններին, զույգերին և հղի կանանց նվազագույն հետազոտությունների ու բուժման փաթեթ առաջարկելու հարցին:

- Մեծացնել հսկողությունը ծնունդների բարդացումների ժամանակ ձեռնարկվող անհետաձգելի միջամտությունների նկատմամբ. մասնավորապես՝ ստուգել կեսարյան հատում վիրահատության իրականացման համապատասխանությունը սահմանված ցուցումներին:
- Տրամադրել ավելի նախաձեռնողական կրթություն ծնողներին նորածինների կերակրման, զարգացման և նորածինների հիվանդությունների ժամանակ վտանգավոր ախտանիշների ճանաչման ոլորտում:
- Հղիության արհեստական ընդհատումների թիվը կրճատելու նպատակով ուսումնասիրել բնակչության համար հակաբեղմնավորիչների հասանելիությունը և հակաբեղմնավորիչներ չօգտագործելու այլ հնարավոր պատճառները: Երիտասարդների համար առավել մատչելի ծառայություններ իրականացնել: Երիտասարդ կանանց հակաբեղմնավորիչներին օգտագործման վերաբերյալ գիտելիքներ տրամադրել:
- Առավել մատչելի դարձնել, այդ թվում՝ գնի տեսանկյունից, հակաբեղմնավորիչները, հատկապես՝ գյուղական վայրերում բնակվող կանանց համար:
- Զինել ապագա մայրերին և գյուղական վայրերում առողջապահական ծառայություններ տրամադրողներին համապատասխան գիտելիքներով և պատկերացումներով հղիության ընթացքի վտանգների ախտանիշների մասին:
- Բարելավել անպտղության վաղ հայտնաբերումն ու բուժումը, ինչպես նաև ավելի մատչելի դարձնել վերարտադրողական տեխնոլոգիաները ցածր եկամուտներ ունեցող ընտանիքների համար:
- Խթանել հանրային իրազեկումը հղի կանանց առողջության և սննդակարգի վերաբերյալ՝ նվազեցնելու թերքաշ և թերհաս նորածինների թիվը:
- Ի լրումն հանրային իրազեկման արշավների և գեղերային հավասարության և հասարակությունում կանանց դերի ամրապնդման՝ կարևոր է ապահովել օրենսդրական կարգավորումներ հղիությունների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման նպատակով:
- Մայրական առողջության պահպանման նպատակով ապահովել նախաբեղմնավորման խորհրդատվություն և նախաձննդյան խնամքի փուլում հայտնաբերված պաթոլոգիաների անվճար բուժում:
- Հղի կանանց ապահովել երկաթի և ֆոլաթթվի համալրումներով:

3.4.2 Երեխայի (6-18) առողջությունն ու սնուցումը

Առողջության հետազոտման ծրագրեր և սնուցում

Նախորդ տարիքային խմբում երեխայի առողջությունն ու բարեկեցությունը հիմնականում կախված էր ծնողից և առողջապահական ծառայություններից: Ստորև ընդհանուր մահացության տվյալների հետ մեկտեղ ամփոփվում են վարքագծային ռիսկի գործոնները դպրոցական և դեռահասության տարիքում: Եթե մենք չկարողանանք դեռահասների շրջանում սերմանել առողջ վարքագիծ և առողջ ապրելակերպի հմտություններ, ապա հետագայում, մեծ տարիքում հիվանդությունների 70%-ի պատճառը կվերագրվի անառողջ կամ ռիսկային վարքագծին, որ մարդիկ ձևավորում են ավելի երիտասարդ տարիքում¹²²:

Հայաստանում երեխայի առողջության պահպանման իրավունքներն ամրագրող բոլոր ընդհանուր օրենսդրական փաստաթղթերի հետ մեկտեղ դպրոցահասակ երեխաների առողջության պահպանման իրավունքը հատուկ մատնանշված է «Նախադպրոցական և դպրոցա-

¹²² Առողջություն աշխարհի դեռահասների համար. երկրորդ հնարավորություն երկրորդ տասնամյակում, ԱՀԿ, 2014:

կան հաստատություններում երեխաների բժշկական խնամքի մասին» (09.04. 2013, N 874-Ա) հրամանում և Առողջապահության նախարարի՝ «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» (03.11.2013, N 70-Ն) հրամանում: Երեխաների և դեռահասների առողջության մասին տեղեկությունները և վիճակագրությունը չեն հավաքվում համակարգված եղանակով: Օրինակ՝ ՀՀ առողջապահության նախարարությունը 350-ից ավելի աշակերտ ունեցող դպրոցի համար ապահովում է մեկ բուժքրոջ ծառայություն: Եթե աշակերտների թիվն ավելի փոքր է, ապա բուժքույրն աշխատում է մեկից ավելի դպրոցում: Դպրոցական բուժքույրը կապեր ունի տեղական պոլիկլինիկայի հետ և հիմնականում պատասխանատու է առաջին օգնության և համաճարակներին արձագանքելու և ամենօրյա հետազոտումների համար: Հետազոտումները կատարվում են տարին մեկ անգամ, դրանք ամրագրված են թիվ N 70-Ն հրամանով և թիվ N 874-Ա հրամանով և ներառում են քաշը, հասակը, զարկերակային ճնշումը, տեսողական և լսողական խնդիրները, կեցվածքի շեղումները: 2008թ.-ից սկսած հոգեբանասոցիալական հարցաշարեր են լրացվել, սակայն ընդհանուր վիճակագրություն չի վարվել այս բոլոր ցուցանիշների վերաբերյալ: Որոշ փորձնական դպրոցների համար Արաբկիր բժշկական կենտրոնը իրականացնում է վիճակագրական ուսումնասիրություն, որը, սակայն չի արտացոլում ընդհանուր իրավիճակը Հայաստանում: Բուժքույրը նաև պատասխանատու է երիտասարդներին բարեկամական առողջապահական ծառայություններ (Youth Friendly Health Services) մատուցելու համար: Այդուհանդերձ, այս ծառայությունների որակը և մատուցման մակարդակը դպրոցներում խնդրահարույց է: 2003թ.-ից սկսած Ընտանիքի և առողջության համահայկական ասոցիացիայի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի օժանդակությամբ Հայաստանում գործել են 30-ից ավելի երիտասարդներին բարեկամական առողջապահական ծառայություններ մատուցող կենտրոններ, վերապատրաստվել են մասնագետներ այդ մոտեցումների, խորհրդատվության տրամադրման և հաղորդակցության ոլորտում: Ծրագրի ավարտից հետո ծառայությունների մեծ մասը շարունակական բնույթ չի ունեցել, քանի որ պետությունից ֆինանսական օժանդակություն չի ստացվել:

Պոլիկլինիկաներից և դպրոցներից մի քանիսն ունեն հոգեբաններ, սակայն դա ԱՆ-ի պաշտոնական պահանջը չէ: Այսպիսով՝ դպրոցահասակների և դեռահասների հոգեկան առողջության վիճակը կարող է գնահատվել միայն 12-17 տարեկանում կատարված զննումների արդյունքում:

Ինչ վերաբերում է հիվանդանոցային խնամքին, ծնողները վճարում են երեխաների համար՝ սկսած 8 տարեկանից: ԱՀԿ-ի ոչ վարակիչ հիվանդությունների չորս գործոնների (ծխախոտի օգտագործում, ֆիզիկական ակտիվության բացակայություն, անառողջ սննդակարգ և ալկոհոլի վնասակար օգտագործում), ինչպես նաև հոգեկան առողջության խնդիրների կանխարգելումը պետք է սկսել դեռահասության տարիքից: Քաղաքականության մակարդակում երեխաների պաշտպանությունը թմրադեղերի, ծխախոտի և ալկոհոլի գործածումից ամրագրված է «Ծխախոտի վաճառքի, սպառման և օգտագործման մասին» ՀՀ օրենքով, «Թմրադեղերի և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքով:

Հայաստանում բացակայում է պաշտոնական նոր վիճակագրություն դպրոցահասակների կողմից ալկոհոլի, թմրամիջոցների կամ ծխախոտի օգտագործման մասին: Դպրոցահասակների առողջությանը վերաբերող հետազոտությունը՝ հիմնված երեխաների հաղորդումների վրա և անցկացված Արաբկիր բժշկական կենտրոնի կողմից 2012թ.-ին ցույց է տալիս, որ 15 տարեկան տղաների 11%-ը և աղջիկների 1.5%-ը ծխում են, 15 տարեկան տղաների 18%-ը, իսկ աղջիկների 6%-ն են օգտագործում ալկոհոլ, 15 տարեկան տղաների 6%-ը և աղջիկների՝ 0.4%-ը օգտագործում են թմրամիջոցներ: Դպրոցները անց են կացնում առողջ ապրելակերպի վերաբերյալ դասընթացներ և սովորաբար այդ ծրագրերում ներառում են ծխախոտի, ալկոհոլի և թմրամիջոցների գործածության հետևանքներն առողջության համար թեմաները: Առողջությանը վերաբերող 42 դասաժամ է նախատեսված 9-11-րդ դասարանների դպրոցական ծրագրում:

Գիրությունը նույնպես համատարած երևույթ է դառնում դպրոցահասակ երեխաների շրջանում: Երեխաների սնուցման հարցը կառավարության հսկողության տակ է գտնվում և

կարգավորվում է հետևյալ օրենսդրական ակտերով և ծրագրերով՝ «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ. ազգային ծրագիր», «ՄԱԿ-ի զարգացման աջակցության 2010-2015թթ. ծրագիր» (ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ), Ալյորի հարստացման ազգային ծրագիր, «Երեխաների սնուցման բարելավման ազգային ռազմավարությունը և 2013-2015թթ. գործողությունների ծրագիր» (2011թ.), Յոդի պակասորդի վերացման ազգային ծրագիր և սանիտարական նորմեր և դպրոցներում սննդի ապահովման մասին կանոններ (06.06.2014թ.):

Առաջարկություններ

- Շարունակել առողջ ապրելակերպի մասին կրթությունը (պատշաճ թվով առողջ ապրելակերպի մասին դասերի հետևողական անցկացում բոլոր դասարաններում) դպրոցահասակ երեխաների շրջանում՝ երեխաների ակտիվ ներգրավմամբ:
- Ապահովել առողջ ապրելակերպի դասավանդման մեթոդաբանության վերաբերյալ նախնական և ընթացիկ վերապատրաստումներ ուսուցիչների համար:
- Կրթել և իրազեկել ծնողներին, ուսուցիչներին և առողջապահության ոլորտի աշխատողներին առողջ ապրելակերպի և սեռական առողջության ոլորտի խնդիրների մասին:
- Կրթել և իրազեկել ծնողներին, մանկավարժներին և առողջապահության ոլորտի աշխատողներին դպրոցահասակների-դեռահասների առողջությանն ու սնուցմանը, առողջ ապրելակերպին և սեռական առողջությանը վերաբերող խնդիրների մասին:
- Բարելավել դպրոցահասակ երեխաների և դեռահասների սնունդը, հատկապես՝ գյուղական վայրերում: Սա ենթադրում է խթանել առողջ սնունդ օգտագործելու սովորույթների ձևավորմանը, այդ թվում՝ իրազեկման քարոզարշավներ շաքար պարունակող ըմպելիքների և «արագ սննդի» գերսպառման հետ կապված:
- Ապահովել սննդի որակին և անվտանգությանը վերաբերող համապատասխան քաղաքականության մշակում, կիրարկում և վերահսկում:
- Աջակցել երիտասարդներին բարեկամական առողջապահական ծառայությունների մոդելի զարգացմանը և շարունակականությանը:
- Ապահովել վիճակագրության կենտրոնացված տվյալների բազա դպրոցներում իրականացված զննությունների վերաբերյալ, որոնք կարող են հետազայում ևս օգտագործվել դպրոցահասակ երեխաների շրջանում առողջապահական խնդիրների բացահայտման և լուծման համար:
- Ապահովել ծխախոտի և ալկոհոլի ապառման և գովազդի մասին օրենսդրության կիրարկումը, հատկապես ուշադրությունը բևեռելով մինչև 18 տարեկան երեխաների համար ծխախոտի և ալկոհոլային խմիչքների հասանելիության սահմանափակման վրա:

3.4.3 Դպրոցական առողջությունն ու սնուցումը

Դպրոցական առողջությունն ու սնուցումը համապարփակ հասկացություն է: Այն ընդգրկում է մի շարք բաղադրիչներ, որոնք ուղղված են 6-18 տարեկան երեխաների առողջական ռիսկերի ու խնդիրների արդյունավետ կանխարգելմանը:

Չափազանց կարևոր է դպրոցականների համար համապատասխան պայմանների ստեղծումը՝ նրանց բառի լայն իմաստով առողջ պահելու նպատակով, ինչը իր հերթին կապահովի արդյունավետ կրթական համակարգ, ուսուցառման արդյունքներ և հետագա հաջողություններ կյանքում:

Դպրոցահասակ երեխաները խոցելի են որոշ առողջական ռիսկերի նկատմամբ, ինչը պայմանավորված է իրենց ֆիզիոլոգիական և վարքագծային յուրահատկություններով:

Սեյվ դը չիլդրենը Հայաստանում իրականացրել է դպրոցական առողջության իրավիճակի գնահատում՝ կիրառելով միջազգայնորեն ընդունված Ռեսուրսների կենտրոնացում ար-

դյունավետ դպրոցական առողջության վրա (ՌԿԱԴԱՀ) կառուցվածքը, որը ներառում է չորս հիմնական բաղադրիչներ. (1) Դպրոցական առողջապահության և սնուցման ամբողջական քաղաքականության առկայություն և իրականացում; (2) Ապահով ֆիզիկական և սոցիալ-հոգեբանական միջավայրի ապահովում; (3) Հմտությունների վրա հիմնված առողջապահական կրթություն և (4) Դպրոցահեն առողջապահական և սնուցման ծառայությունների ամբողջական և անվճար տրամադրում:

Ստացված արդյունքները փաստում են, որ չի կատարվել երկրի դպրոցական առողջության իրավիճակի ներկայացուցչական վերլուծություն: Դպրոցական երեխաների առողջության վերաբերյալ հասանելի վիճակագրությունը թերի է կամ հնացած: Որոշ ցուցանիշների վերաբերյալ տվյալները բացակայում են (գիրություն, բերանի խոռոչի առողջություն, բռնություն դպրոցում, ճիճվակրության տարածվածություն և այլն):

Բացի այդ գոյություն ունեն տարբեր քաղաքական փաստաթղթեր, որոնք երաշխավորում են արդյունավետ դպրոցական առողջություն և սնուցում, սակայն կա այդ փաստաթղթերի լուսաբանման և տեղեկացվածության խնդիր, ինչպես նաև առկա քաղաքականությունների հետևողական իրականացման և մշտադիտարկման պակաս:

Դպրոցներում ապահով ֆիզիկական միջավայր երաշխավորող քաղաքական փաստաթղթերը ներառում են կրթական հաստատություններին ներկայացվող հիմնական պահանջները, դպրոցի շենքի շինարարության նորմերը, ջրամատակարարման և սանիտարահիգիենիկ ստանդարտները, դպրոցական սնունդի որակն ու անվտանգությունը կարգավորող նորմերը, ֆիզիկական կուլտուրայի դասերի համար նախատեսված հարմարությունների, ինչպես նաև աղետների դիսկի նվազեցման չափորոշիչները: Միննույն ժամանակ տվյալ նորմերն ու ստանդարտները պատշաճ կերպով լուսաբանված և հասանելի չեն դպրոցներին: Վերջին սանիտարահիգիենիկ նորմերը մշակվել և հաստատվել են ՀՀ կառավարության կողմից 2002թ., սակայն դրանք չեն ներառում այնպիսի կարևոր կետեր ինչպիսիք են՝ հաշմանդամ խմբերի երեխաների հատուկ կարիքները, հիվանդությունների կանխարգելումը և այլ: Սեյվ դը չիլդրենի կողմից իրականացված թիրախային դպրոցների հարմարությունների տարբեր գնահատումները բացահայտել են զգալի անհամապատասխանություններ սանիտարահիգիենիկ նորմերին, այդ թվում խմելու ջրի և ձեռք լվալու հարմարանքների բացակայություն, սանհանգույցների, ինչպես նաև ճաշարանի և մարզահալիճի վատ պայմաններ:

Դպրոցներում ապահով սոցիալ-հոգեբանական միջավայրը երաշխավորող մեխանիզմների պակաս կա; չկա որևէ արտաքին և ներքին համապարփակ քաղաքականություն, որը հասցեագրում է դպրոցներում բռնությունը, ահաբեկումը, փոքրամասնությունների նկատմամբ խտրական վերաբերմունքը, ինչպես նաև թմրադեղերի ու ալկոհոլի օգտագործումը: Աշխատակազմը և երեխաները բավականաչափ չեն իրազեկվում երեխաների իրավունքների և երեխաների պաշտպանության հարցերի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է առողջական կրթությանը, հմտությունների վրա հիմնված առողջական կրթությունը չի ուսուցանվում պատշաճ և բավարար կերպով բոլոր դպրոցներում: Յուրաքանչյուր թեմային տրամադրված ժամանակը, ինչպես նաև ուսուցման մեթոդների անհետևողական իրականացումը բավարար չեն երեխաների մոտ անհրաժեշտ հմտություններ ձևավորելու և առողջ ապրելակերպ սերմանելու համար:

Չնայած ուսումնական պլանի մեջ ներառված է երեխաների ֆիզկուլտուրայի դասերը, այնուամենայնիվ գոյություն չունեն այլընտրանքային (հատուկ) դասեր առողջական խնդիրներ կամ սահմանափակումներ ունեցող երեխաների համար (օր՝ կարճատեսություն, գիրություն):

Այս ամենի հետ մեկտեղ սահմանված դպրոցահեն առողջապահական և սնուցման ծառայությունները բավարար չեն դպրոցականների առողջապահական կարիքները (լայն իմաստով) պատշաճ ուսումնասիրելու և հասցեագրելու համար: Նման խնդիրներից են հոգեբանական կարգավիճակը, միջանձնային հարաբերությունների հետ կապված խնդիրները, սեռային խնդիրները, ալկոհոլի կամ թմրանյութի չարաշահումը, ինքնասպանության փորձերը և այլն:

Առաջարկություններ

- Պետական համապատասխան կառույցները վերանայեն և բարելավեն սանիտարահիգիենիկ նորմերը:
- Պետությունն առաջնահերթություն տա և ավելի շատ միջոցներ հատկացնի դպրոցականների առողջության համար, համապատասխան քաղաքականության հետևողական կիրառման համար, ինչպես նաև բարելավի դրանց իրականացման վերահսկումը:
- Ամրապնդվի պետական միջոլորտային համագործակցությունն ու համակարգումը դպրոցական առողջության և սնուցման քաղաքականության մշակման/վերանայման ու իրականացման գործընթացում: Երաշխավորվի հաշմանդամություն ունեցող երեխաների հատուկ կարիքների հասցեագրումը:
- Հնարավորություն ստեղծվի դպրոցական մակարդակում ՌԿԱԴԱՀ գնահատում իրականացնելու համար, որպեսզի ուսումնասիրվի տեղեկատվության տարածումը վերևից ներքև ու առկա ազգային քաղաքականությունների փաստացի կիրառումը:
- Հնարավորություն ստեղծվի ազգային դպրոցական առողջության իրավիճակի վերլուծություն իրականացնելու համար ներառյալ կլինիկական ու վարքային հետազոտությունները:
- Բարելավվի կրթական և առողջապահական տեղեկատվական համակարգերը՝ հաշվի առնելով շահագրգիռ կողմերի կարծիքը համակարգի արդյունավետության վերաբերյալ:
- Համակարգվեն ջատագործության ջանքերը՝ տարրական և միջնակարգ դպրոցներում առողջական կրթության ուսուցանումը բարելավելու համար:
- Ներդրվի դպրոցների սոցիալ-հոգեբանական միջավայրը կարգավորող համընդհանուր դպրոցական քաղաքականություն: Այն ներառում է բռնության կանխարգելում, համացանցի ապահով օգտագործում, խտրականության և պիտակավորման կանխարգելում, ինչպես նաև հոգեներգործող նյութերի օգտագործման հսկողություն:
- Համապատասխան աշխատանք տարվի՝ սահմանափակ կարողություններով երեխաների համար (կարճատես, գեր) այլընտրանքային ֆիզիկական կրթության դասեր ներդնելու համար:

3.4.4 Հարուկ կարիքներով երեխաների առողջությունը

ԱՀԿ-ն սահմանում է հաշմանդամությունը՝ որպես խանգարումներ և գործունեության ու մասնակցության սահմանափակում: Հաճախ հաշմանդամություն ունեցող երեխաներն արգելքների են հանդիպում առողջապահական և վերականգնողական ծառայություններից օգտվելու հարցում, հատկապես՝ գյուղական վայրերում:

Քաղաքականության մակարդակում հաշմանդամ անձանց և երեխաների իրավունքները պաշտպանվում են «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (1993թ.), «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ազգային ռազմավարության 2005-2015թթ. ծրագրով և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայով (վավերացված՝ 17.05.2010թ.-ին): Օրենսդրության համաձայն՝ անձը բժշկական և սոցիալական ստուգման արդյունքում ճանաչվելով հաշմանդամ ստանում է հաշմանդամության կարգ (I, II, III կարգ), իսկ 18-ից ցածր տարիքի երեխան ստանում է հաշմանդամ երեխայի կարգ: Առկա է նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներգրավման մասին» օրենքի նախագիծը, որն արտացոլում է հաշմանդամության նկատմամբ սոցիալական մոտեցումը:

Գոյություն ունեն պետական մի շարք բժշկական և սոցիալական աջակցության ծրագրեր, որոնք տրամադրում են անվճար ծառայություններ հատուկ կարիքներ ունեցող երեխաներին: Համաձայն ՀՀ օրենսդրության՝ վերականգնողական սարքավորումները անվճար են հաշմանդամ երեխաների համար: Կա անվճար անհատական վերականգնողական ծրագիր, որը հաշմանդամ երեխային պետք է տրամադրվի սոցիալական ծառայություններ տրամադ-

րող տարածքային մարմինների կողմից: Անհատական ծրագիրը երեխային ապահովում է պրոթեզավորման-օրթոպեդիկ միջոցներով, տեխնիկական միջոցներով, սարքավորումներով: Սակայն հասարակական կազմակերպությունների տվյալներով («Լիարժեք կյանք» ՀԿ, 2012թ.)՝ անհատական վերականգնողական ծրագրերը ձևական բնույթ են կրում: Համաձայն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի 2012թ.-ի զեկույցի՝ հաշմանդամություն ունեցող հաշվառված երեխաները կազմում են երեխաների ընդհանուր թվի 1 տոկոսը (հաշվառված է 8000 երեխա): Համաձայն նույն զեկույցի՝ գոյություն ունի հաշվարկ, ըստ որի եթե հաշմանդամություն ունեցող հաշվառված երեխաների համաշխարհային միջինը բնակչության 2,5%-ն է, ապա պետք է գոյություն ունենա հաշմանդամություն ունեցող մոտ 12000 երեխա, որոնք ինչ-ինչ պատճառներով հաշվառված չեն: Այսպիսով՝ այս երեխաները ներգրավված չեն սոցիալական և վերականգնողական ծրագրերում: Սկսած 2005թ.-ից ԵՄ-ի ֆինանսավորմամբ Հայաստանը կիրառում է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգ, որը պետք է հայտնաբերի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ազգային և մարզային մակարդակներում: Սակայն իրականում այս համակարգը արդյունավետ չի գործում հատուկ կարիքներ ունեցող երեխաների հայտնաբերման տեսանկյունից:

Ցանկացած տիպի բժշկական խնամք անվճար է 18-ից ցածր տարիքի հաշմանդամ երեխաների համար: Հաշմանդամ երեխաներին տրվում են անվճար դեղամիջոցներ բժշկի նշանակմամբ: Անվճար դեղամիջոցների տրամադրման չափորոշիչները և քաղաքացիների արտոնված խմբերը ամրագրված են կառավարության 23.11.2006թ.-ի թիվ 1717-Ն որոշմամբ: Սակայն ՄԻՊ-ի գրասենյակն արձանագրել է դեպքեր, երբ հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ երեխաները չեն ստանում դեղամիջոցներ իրենց տարածքային առողջության առաջնային պահպանման հաստատություններից:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի վերջին (2012թ.) ուսումնասիրությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար առողջապահական ծառայությունների մատչելիության և այդ ծառայություններից ծնողների գոհունակության առնչությամբ բացահայտել է, որ քաղաքային վայրերում հաշմանդամ երեխաների 19%-ը, և գյուղական վայրերում հաշմանդամ երեխաների 25%-ը չեն գտնվում մանկաբույժի հսկողության ներքո: Ծնողների 48%-ի կարծիքով՝ նման ծառայությունների կարիք չկա, 26%-ը չի կարողանում վճարել այդ ծառայությունների համար, 16%-ը նշել է իր համայնքում նման ծառայությունների բացակայության մասին, 12%-ը նշել է, որ իրազեկված չի եղել ծառայության մասին, իսկ 12%-ը նշել է, որ առկա ծառայությունների որակը բավարար չի եղել: Գյուղական համայնքներում պատասխանողներն ավելի հաճախակի հիշատակել են ծառայությունների բացակայությունն ու ֆինանսական արգելքները:

Կան նաև հատուկ կարիքներով երեխաներին պետական սոցիալական և բժշկական ծրագրերում չներգրավելու այլ պատճառներ, ինչպիսիք են, օրինակ, ծնողների շրջանում տեղեկատվության բացակայությունը: Օրինակ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի 2012թ.-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաների միայն 23%-ն է ստանում ծառայություններ անհատական վերականգնողական ծրագրերի շրջանակներում, ընտանիքների 32%-ը չի վճարել բժշկական ծառայությունների դիմաց, 52%-ը վճարել է դեղամիջոցների դիմաց, 28%-ը վճարել է բուժզննության դիմաց, 6%-ը՝ տեխնիկական հարմարությունների և 22%-ը՝ բժիշկներին և բուժքույրերին: Ծնողների կեսից ավելին հիշատակել են, որ տեղյակ չեն եղել անհատական վերականգնողական ծրագրերի կամ անվճար դեղերի ցանկի մասին: Ի լրումն՝ ՄԱԿ-ի կոմիտեն հիշատակել է, որ մարզերում բնակվող հատուկ կարիքներով երեխաների համար մատչելի չեն պատշաճ որակի խնամքն ու ծառայությունները:

Մյուս խնդիրը հենաշարժիչ համակարգի հիվանդություններով պայմանավորված հաշմանդամություն ունեցող երեխաների համար առողջապահական ծառայությունների ֆիզիկական մատչելիությունն է: Տեսողական խնդիրներ ունեցող երեխաները զրկված են առողջական ռիսկերի մասին՝ իրենց տեղեկություններ ստանալու իրավունքի իրականացման հնարավորությունից, քանի որ բրայլյան լեզվով, նշանների լեզվով նման տեղեկություններ գոյություն չունեն, իսկ նշանների լեզվով կամ սուբտիտրերով որևէ հեռուստահաղորդում չի հեռարձակվում:

Առաջարկություններ

- Առաջարկվում է բարելավել հաշմանդամության հաշվառման և հաշվետվողականության համակարգը, որպեսզի հաշմանդամություն ունեցող երեխաները դուրս չմնան պետական աջակցության ծրագրերից և չգրկվեն առողջապահական ծառայություններից անվճար օգտվելու իրենց իրավունքից:
- Բարձրացնել հատուկ կարիքներ ունեցող երեխաների ծնողների իրազեկվածությունը գործող օրենսդրության և պետության կողմից հաշմանդամ երեխաներին մատուցվող աջակցության վերաբերյալ: Տեղեկությունները կարող են տարածվել լրատվամիջոցների, սոցիալական աշխատողների կամ բուժաշխատողների կողմից, ովքեր անմիջական շփում ունեն ընտանիքների հետ:
- Իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով այն սոցիալական խմբերի և դասերի ցանկը, որոնք իրավունք ունեն անվճար կամ արտոնյալ պայմաններով ստանալու դեղամիջոցներ, պրոթեզներ կամ առողջապահական ծառայություններ, պետք է հրապարակել առողջության առաջնային պահպանման հաստատություններում կամ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գրասենյակներում: Շահառուներին կարելի է բաժանել նաև բուկլետներ:
- Բարելավել բուժհաստատությունների ֆինանսական մատչելիությունը և պայմանները՝ էլ ավելի մատչելի դարձնելու դրանք հաշմանդամ երեխաների համար:
- Նախատեսել լրացուցիչ սոցիալական փաթեթներ հաշմանդամ երեխաների ծնողների համար:
- Կատարելագործել անհրաժեշտ վերականգնողական ծրագրերը և ծառայությունները (արդիականացված սարքավորումներ, ծառայությունների հասանելիությունը համայնքներում) հատկապես՝ գյուղական վայրերում:
- Տրամադրել առողջությանը վերաբերող նյութեր բրայլյան լեզվով տեսողական խնդիրներ ունեցող դպրոցահասակների համար: Հեռարձակել բժշկական կրթական հաղորդումներ, որոնք համապատասխանում են լսողական խնդիրներ ունեցող երեխաների կարիքներին՝ ժեստային թարգմանության կամ սուբտիտրերի միջոցով:
- Ամրապնդել միջգերատեսչական համագործակցությունը հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցության համար: